Ազգ
Azg
4 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2020 ՈՒՐԲԱԹ 27(5624)
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
9 771829 165003 20027

# Օ՜, ժամանակներ, օ՜, ղեկավարներ. Թրամփը կոչ է անում կրկնակի քվեարկել

ԱՄՆ նախագահ Թրամփը Հյուսիսային Կարոլինայում հանդիպման ժամանակ կոչ է արել իր ընտրողներին երկու անգամ քվեարկել նոյեմբերին սպասվող նախագահական ընտրություններում: Սույն տեղեկությունը փոխանցող գերմանական ԶԼՄ-ները հավելում են, թե ԱՄՆ նախագահն իր՝ ապօրինության դրդող գործողությունը մեկնաբանել է հետեւյալ կերպ. Ընտրական կարգը ստուգողական կիանձնի, եթե առաջին անգամ քվարկեն փոստով, իսկ երկրորդ անգամ՝ անձամբ: Եւ պարզ կդառնա՝ առաջին քվեն հաշվե՞լ են, թե՞ ոչ:

ԱՄՆ-ում սա օրինական գործողություն չի կարող լինել, քանի որ ամեն ընտրող ունի մեկ քվե, մեկ ձայն: Հյուսիսային Կարոլինայում գործում են նույն օրենքները, հետեւաբար այստեղ հնչեցրած Թրամփի կոչն հակաօրինական է, եւ, ավաղ, կարծես էլ զարմանք չի հարուցում:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՕՐԵՐԻ ՀԵՏ

# Մեզ պե՞տք են կենսաբանական լաբորատորիաները

Ժամանակին, 1994 թվականին, ինձ էլ բախտ վիճակվեց որպես տուժող հայտնվել քննչական վարչությունում, այն էլ՝ կարեւոր գործերի վարչությունում: Անծանոթ մարդիկ ուշ գիշերին աշխատանքից վերադարձիս դարանակալելով հարձակվել էին վրաս եւ վերելակ մտնելիս ուղիղ հարվածներ հասցրել դեմքիս: Հարցաքննողը ՀԿԿ քննչական վարչության պետ Սուրեն Գյոզալյանն էր, բազմափորձ ու կոլորիտային մի անձնավորություն, որը դատաբժշկական տեղեկանքին ծանոթանալուց, ջարդված ակնոցս զննելուց հետո զրույց սկսեց՝ դեմքի հետ բոլորովին կապ չունեցող հարցերի շուրջ: Եվ հանկարծ՝ անսպասելիորեն ուղիղ հարց տվեց. «Որպես լրագրող ի՞նչ կարծիքի եք մեր մասին. օգտակա՞ր ենք աշխատում, թե՞... օգուտով»: Չեմ հիշում ի՞նչ պատասխանեցի, բայց սրամիտ այդ մարդու հարցումը հիշում եմ միշտ եւ տարբեր իրավիճակներում մտքումս նույն հարցն եմ տալիս՝ օգտակա՞ր, թե՞ օգուտով: Ինչպես հիմա:

Հայտնի է, որ Հայաստանում կան եւ գործում են ամերիկյան նախաձեռնությամբ ու ֆինանսավորմամբ ստեղծված եւ որպես կենսաբանական բնորոշված 6 կամ 7 լաբորատորիաներ, այսպես կոչված՝ բիոլաբորատորիաներ: Ո՞րն է դրանց նպատակը, հետազոտական ի՞նչ խնդիրներով են զբաղվում, ինչո՞ւ համար են դրանք գտնվում Մ. Նահանգներից դուրս, մեր երկրում, ո՞րն է պատճառը, որ դրանք, ուզում եմ ասել՝ դրանց նմանները, ՆԱՏՕ-ի անդամ երկրներում ու հատկապես Եվրոպայում չեն գործում, ո՞վ կամ ովքե՞ր են հետազոտությունների արդյունքներին տիրապետում եւ օգտագործում դրանք, եւ ամենահետաքրքրականը՝ ինչո՞ւ համար են դրանք փակ եւ անմատչելի:

Մեր մամուլում դրանց գոյության մասին ընդհանրապես չի գրվել ու չի գրվում: Միակ բացառությունը, որքան հիշում եմ, եղավ նախորդ տարի, երբ ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լավրովը ասուլիսներից մեկում բարձրացրեց հարցը հայ-ռուսական դաշնակցային հարաբերությունների համատեքստում, թե ինչո՞ւ է Հայաստանը դրանք գաղտնի պահում իրենցից: Հայկական կողմի պատասխանը հնչեց «լղոզված», թե մեր լաբորատորիաները անմատչելի չեն եւայլն, սակայն այդպես էլ Լավրովի ու Զոհրաբ Մնացականյանի միջեւ որեւէ հուշագիր չստորագրվեց դրանց մասին:

Հայտնի է, որ ռուսները շատ են շահագրգռված ամերիկյան լաբորատորիաների հարցով, դրանում տեսնելով սպառնալիք՝ ԱՊՀ երկրների միասնականության եւ Ռուսաստանի անվտանգության նկատմամբ: Բացի Հայաստանից ու Վրաստանից, նման տարրալուծարաններ գործում են նաեւ Ադրբեջանում, Ղազախստանում, Մոլդովայում, Ուզբեկստանում եւ Ուկրաինայում, դեռ չհաշված, ուշադրությո՛ւն, Տանզանիայի, Աֆղանստանի եւ Իրաքի նման երկրները: Ժամանակին դրանց մասին ՌԴ Անվտանգության խորհրդի քարտուղար Նիկոլայ Պատրուշեւը կարծիք էր հայտնել, որ այդ հիմնարկներում գենետիկական հետազոտություններ են իրականացնում, նաեւ կենսաբանական զենք պատրաստում: Ըստ որոշ պնդումների, դրանց նկատմամբ ռուսների խանդոտ վերաբերումի պատճառով է, որ Հայաստանում 2018 թ. հեղաշրջման նկատմամբ Մոսկվան սառը վերաբերմունք ցույց տվեց, նկատի առնելով, որ նախագահ Սերժ Սարգսյանը 2011-ին, թե՞ 2012-ին թույլատրել էր այդ հիմնարկների ստեղծումը, առանց զգուշացնելու դաշնակից երկրին:

Սակայն այս պահին՝ հարցերի հարցը,- որի համար էլ գրվում է այս հոդվածը,- ներկա համավարակի պայմաններում այդ գաղտնի հիմնարկներում տարվող գիտական հետազոտությունների օգտակարության (օգգ) խնդիրն է մեր՝ հյուրընկալող երկրի համար: Արդյո՞ք դրանք գոնե դույզն չափով նպաստում են covid-19 վիրուսի ճանաչմանը, նրա կենսաբանական հատկանիշներին, տարածման առանձնահատկություններին: Այդ հիմնարկները խորհրդատվությամբ օգնո՞ւմ են մեր համաճարակաբաններին: Միով բանիվ՝ նրանց առկայությունը որեւէ կերպ նպաստո՞ւմ է համավարակի դեմ մեր պայքարին: Հազիվ թե: Գոնե մեր մամուլին հայտնի չէ նման տեղեկություն:

Իսկ երկրորդ եւ ավելի կարեւոր հարցը. այդ հիմնարկները որքանո՞վ են անվտանգ մեր ժողովրդի համար եւ պահով՝ մարդկային կամ տեխնոլոգիական սխալի տեսակետից, կենսաբանական այլեւայլ վտանգներից, որոնց մասին նախազգուշացնում էր, եթե չեմ սխալվում՝ դեռեւս 2018-ին, Վրաստանի պետանվտանգության նախկին նախարար Իգոր Գեորգաձեն, ինչպես նաեւ, հակադիր կողմից, նույնինքն նախագահ Թրամփը մեկ այլ՝ Չինաստանի օրինակով, մեղադրելով վերջինիս տարրալուծարանները covid-19-ի ծագման համար...

Իսկ հիմա եկեք կրկնենք այժմ հանգուցյալ Սուրեն Գյոզալյանի հարցը. Հայաստանում գործող կենսաբանական լաբորատորիաները օգտակա՞ր են աշխատում, թե՞ օգուտով:

Կարծում եմ պատասխանը հստակ է. մեր պետության ու ժողովրդի շահերի տեսակետից՝ ո՛չ օգտակար, ո՛չ էլ օգուտով... Ուրեմն:

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

# Թուրքիան ոչ միայն մեկուսանում է տարածաշրջանում, այլեւ օտարվում նաեւ Արեւելյան Միջերկրականում

## *Անկախ թուրք դիտորդները դա պայմանավորում են Էրդողանի անհեռատես քաղաքականությամբ*

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

Թուրքագետ




Վերջին օրերին կրկին սրվեց Թուրքիա-Հունաստան հարաբերությունների լարվածությունը: Դրան, ինչպես միշտ, պատճառ են դարձել նախագահ **Ռեջեփ Թայիփ Էրդողանի** հոխորտանքները: Սեպտեմբերի մեկին նա ելույթ էր ունեցել Գիրեսունի նավահանգստում եւ խոսքն ուղղելով հունական կողմին, ասել՝ «Որպես ազգ մենք թուրքերս ոչ ուրիշի իրավունքը կխլենք, ոչ էլ կզիջենք մեր իրավունքները: Միջերկրականում եւ Էգեյան ծովում թույլ չենք տա ծովահենությանը: Ոչ ոք չի կարող Միջերկրականի ափերին բանտարկել մեր երկիրը: Մինչեւ վերջ պաշտպանելու ենք թուրք ազգի եւ Կիպրոսի թուրքերի իրավունքները»: Այնուհետեւ նա, ի դեմս Ֆրանսիայի, Իտալիայի եւ Գերմանիայի՝ «նախկին գաղութարարներ» անվանեց Եվրոպական Միության առաջնակարգ երկրներին:

Մինչ այդ, օգոստոսի 25-ին Էրդողանը սպառնացել էր, ասելով՝ «Իմ հույն հարեւաններին հիշեցնեմ, որ նրանք, ովքեր Հունաստանին գցում են թուրքական նավատորմի առաջ, աննշան դիմադրության դեպքում թողնելու են եւ փախչեն»: Նա ամենայն հավանականությամբ նկատի ուներ Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնին եւ Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելին: Այն առումով, որ օգոստոսի 28-ին Մերկելը հայտարարությամբ հիշեցրել էր ԵՄ-ի անդամ երկրներին Արեւելյան Միջերկրականում Հունաստանին սատարելու եւ հույն բարեկամների իրավունքները պաշտպանելու պարտավորության մասին:

⇨2

# «Չափորոշիչ»ին դատարկ նժարը

***Սփյուռքահայ տաղանդավոր բանաստեղծ, բազմաթիվ ժողովածուների հեղինակ, հանդուգն հրապարակախոս Վեհանուշ Թեքյանից ստացված այս հոդվածը հրատարակում ենք ոչ թե հաճույքով, ինչպես ընդունված է ասել նման պարագաներում, այլ՝ համահունչ վրդովմունքով նրա գրածին: Վ. Թեքյանը, մեր իմացությամբ, սփյուռքահայ հեղինակավոր առաջին գրողն է, որ բողոքի եւ ընդվզումի ձայն է բարձրացնում ընդդեմ կրթության նախարարության ընդունած՝ տխրահռչակ չափորոշիչների, որոնք գրեթե ամբողջությամբ անտեսում են ներկա արեւմտահայ՝ սփյուռքահայ գրականությունն ու նրա մշակներին, միաժամանակ մեր նորահաս սերունդներին զրկելով համազգային ժառանգության կրողն ու տերը լինելու իրավունքից:***

Խմբ.

ՎԵՀԱՆՈՒՇ ԹԵՔԵԱՆ

ԱՄՆ

Հայ գրականութեան դասագիրք մը ցեղի հոգիին պատմութիւնն է որ կը փոխանցէ: Տեսանելի ալքեր, խորհրդաւոր ծալքեր: Այլ խօսքով՝ ժողովուրդի լեզուին ու հոգեխառնութեան սրբամատեանն է: Այո՛, սուրբ. որովհետեւ պիտի անմահացնէ ցեղին ձայնը. պիտի լուսաբանէ դեռատի պատանին ու երիտասարդը՝ ցոյց տալով անոր արմատները իր հողին:

Հայ գրականութեան արմատները տարածուած են զանազան երկիրներու մէջ, իսկ երբ Հայաստանի մէջ վերջերս ծրագրուած գրականութեան դասագիրքերու շարքի մը մէջ կ՛անտեսուի, կ՛արհամարհուի Հայաստանի սահմաններէն դուրս նուաճուած գրականութիւնը, կը նշանակէ դասագիրքը կիսատ-պռատ է:

Եթէ դիտումնաւոր է զանցումը արեւմտահայ գրագէտներու, լրջամտութեան պակաս եւ խորապէս թերի յանձնառութիւն է ու, հետեւաբար, դատապարտելի:

Եթէ դիտումնաւոր չէ՝ անսահման տգիտութեան ընկերակցող անպատասխանատուութեան ներկայութիւն է:

Եւ ահաւասիկ չափորոշիչներով ողողուած դասագիրքերուն լեցուն նժարը արդէն թերի է, իսկ միւս նժարը՝ զարմացած, սառած աչքի նման դատարկ է: Չափորոշիչներու որոշողները որոշապէս դեր ունին, իսկ այդ դերը մեզի համար դեռ անորոշ կէտեր ունի: Սակայն առկայ է քաղաքականութիւն մը, որ կը խեղանդամէ հայ գրականութեան ամբողջ մարմինը, կ՛անդամալուծէ անոր կենսունակութիւնը:

Ի՜նչ շնորհ որ ինը արեւմտահայերէն գրող ներառուած է. այն հրեշտակը որ յուշեր է՝ յայտնապէս թեւեր չունէր որ ամբողջութիւնը տեսած ըլլար: Ցանկը կը յորդի օտար գրողներէ կատարուած թարգմանութիւններով: Ուրեմն տեղը նեղ ըլլալուն համար չէ, որ չեն ներկայացուած հայագիրները:

⇨7

ՅԱԿՈԲ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

# Հեռաւոր ազգականը

Արեւմտահայերէնի պահպանման հարցով Հայաստանի կառավարութիւնը սկսաւ զբաղիլ, մանաւորաբար սուրիական պատերազմին պատճառով Հայաստան ապաստանած սուրիահայերուն ուղղակի կամ անուղղակի դրդումով, խնդրանքով, կամ պահանջով: Այսինքն 2013-14 թուականներէն սկսեալ:

Թէ «զբաղիլ»-ը ի՞նչ կրնար նշանակել պետութեան մը համար, կ՛անգիտանայինք, աւելի ճիշդ՝ մեր կարծիքով, շատ լուրջ միջոցներ ձեռք պէտք է առնուէին եւ յատուկ մարմիններ ու յանձնախումբեր կազմուելով, իւրաքանչիւրը ըստ իր մասնագիտութեան պիտի ծրագիրներ մշակէր եւ գործադրութեան դնէր, անշուշտ Հայաստան գտնուող սփիւռքահայ մասնագէտներու հետ համագործակցելով:

Սուրիահայ հեղինակաւոր անձնաւորութիւններու հետ անձամբ գոնէ հինգ անգամ հրաւիրուած եւ մասնակցած եմ ժողովներու թէ՛ նախկին Սփիւռքի Նախարարութեան հրաւէրով, թէ՛ Կրթութեան եւ Գիտութեան Նախարարութեան եւ թէ՛ ալ նոր շրջանի ԿԳՄՍ-ի Նախարարութեան հրաւէրով:

Ժողովներէն խանդավառ դուրս ելած ենք, այն յոյսով, որ մեր առաջարկները նկատի կ՛առնուին եւ խառն յանձնախումբ մը կը սկսի լուրջ աշխատանքի, առաջին հերթին՝ անշուշտ դպրոցական դասագիրքերու հարցով, ապա՝ մամուլի, կամ լրատուական ու թատերական ոլորտներուն մէջ արեւմտահայերէնի ներկայութիւնը ապահովելու հարցով:

Ըսեմ, որ հինգ ժողովներու պարագային ալ երկրորդ՝ լրացուցիչ ժողով չեղաւ՝ յաջորդ քայլերը որոշելու համար: Առ ի պարտականութիւն նախարարութիւնները, երեւի վերէն եկած հրահանգի մը անսալով, ժողով մը յաջողցուցին եւ վե՛րջ:

Անցան ամիսներ, նոյնիսկ տարիներ եւ նոր դասագիրքեր տպուեցան ու լոյսին դարձաւ, որ լեռը ծնած է մուկ մը:

Գրականագէտ, լեզուագէտ, ազգագրագէտ, հայերէն դասագիրքերու հմուտ հեղինակ դոկտ. Յակոբ Չոլաքեան ֆէյսպուքեան իր էջին մէջ մեծ յուսախաբութիւն մը ապրած ըլլալուն փաստերը կու տայ, ներկայ՝ 2020-2021 դպրոցական տարեշրջանին համար պատրաստուած դասագիրքերուն մէջ արեւմտահայ հեղինակներու աննշան ներկայութեան մասին, երբ այդ ժողովներուն յոյսեր կապած՝ կ՛ակնկալուէր որ արեւմտահայ հեղինակներուն թիւը պիտի կրկնապատկուէր:

Կրնա՞ք պատկերացնել, որ ամբողջ 1-6 դասարաններու հայերէնի դասագիրքերուն մէջ ոչ մէկ արեւմտահայ հեղինակ կայ, իսկ 7-12 դասարաններուն՝ հազիւ 10, երբ արեւելահայ եւ օտար հեղինակներուն թիւը 90-ի մօտ է:

Պր. Չոլաքեան կ՛ըսէ, թէ խորհրդային շրջանի դասագիրքերուն մէջ շատ աւելի տեղ տրուած էր արեւմտահայ գրականութեան եւ գրողներու, քան այսօր, երբ կ՛ակնկալուէր ճիշդ հակառակը:

Ընդդիմադիրներ ներկայ իշխանութեան որեւէ նոր որոշում քննադատութեան նշաւակ կը դարձնեն, նոյնիսկ եթէ որոշումին մէջ դրական եւ օգտակար բաներ ալ կան: Չափազանցութիւնը կը հասնի այն աստիճանի, որ ներկայ իշխանութիւնը թուրքին հետ կը բաղդատեն, նոյնիսկ գտնուեցաւ տիկին մը, որ զանոնք թուրքէն ալ վատ որակեց...

Այս առթիւ թող ինծի ներուի, եթէ ըսեմ, որ կան հայաստանցի կանայք, որոնց գործածած փողոցային խօսքերն ու հայհոյանքները այնքան ահաւոր են, որ ես տղամարդ ըլլալով կ՛ամչնամ այդպիսի բառեր լսելէ:

Ես անշուշտ կը միանամ կրթութեան նախարարութեան կողմէ պատրաստուած հայերէնի դասագիրքերուն այսպիսի տգեղ կողմնակալութեան համար բողոքողներուն, սակայն չեմ հայհոյեր: Թող դասագիրքերը կազմողները ամչնան իրենց ըրածէն: Արեւմտահայ գրողներն ու անոնց գեղեցկագոյն գործերը հայ գրականութեան ադամանդակուռ զարդերն են: Եթէ այսքանը կ՛անգիտանան այդ գիտունիկ-գրչակները, թող բարի ըլլան հրաժարելու եւ իրենց վստահուած, հայ նոր սերունդին դաստիարակութեան միտուած գործը ուրիշներուն յանձնեն: Այսօր Հայաստանի մէջ արեւմտահայ գրականութեան եւ լեզուին գիտակ սփիւռքահայ մարդիկ կան, թող զանոնք հրաւիրեն այս գործը լաւապէս գլուխ հանելու:

# Թուրքիան ոչ միայն մեկուսանում է տարածաշրջանում, այլեւ օտարվում նաեւ Արեւելյան Միջերկրականում

⇨1

Գալով **Մակրոնին**, ապա նա էլ օգոստոսի 31-ին հայտարարել էր, որ Արեւելյան Միջերկրականում Թուրքիայի գործողությունները կրում են սադրիչ բնույթ եւ ոտնահարում են Հունաստանի ու Կիպրոսի հանրապետության ինքնիշխանության իրավունքները: Նա միաժամանակ, անդրադառնալով Արեւելյան Միջերկրականում Հունաստանի, Կիպրոսի Հանրապետության, Իտալիայի եւ Ֆրանսիայի մասնակցությամբ օգոստոսի 26-28-ին համատեղ իրականացված զորավարժանքներին, ընդգծել էր. «Թուրքիայի՝ վերջին տարիների ռազմավարությունը չեմ դիտարկում որպես ՆԱՏՕ-ի անդամ երկրին վայել ռազմավարություն»: Հաջորդ օրը Հունաստանին եւ Կիպրոսի Հանրապետությանը Եվրոպական հանձնաժողովի համերաշխությունն էր հայտել կառույցի խոսնակ **Պետեր Ստանոն**:

Հանձնաժողովը միաժամանակ Արեւելյան Միջերկրականում խաղաղության ու երկխոսության ծավալմանը նպաստելու կոչ արեց Թուրքիային, սպառնաց պատժամիջոցներով եւ զգուշացրեց, որ այդ հարցը քննարկման է դրվելու սեպտեմբերի 24-ին ԵՄ-ի երկրների գագաթաժողովում: Մինչ Մերկելն ու Մակրոնը Հունաստանին սատարելու պատրաստակամություն էին հայտնում, իսկ Եվրոհանձնաժողովը պատժամիջոցներով սպառնում Թուրքիային, Արեւելյան Միջերկրականում հակամարտության գոտի հասավ ֆրանսիական Շարլ դը Գոլ ավիակիրը: Այդ ընթացքում ԱՄՆ նախագահ **Դոնալդ Թրամփը** չեղյալ հայտարարեց ամերիկյան զինատեսակների վաճառքը Կիպրոսի Հանրապետություն սահմանափակող որոշումը, ընդ որում առանց Էրդողանի հակազդեցությանը բախվելու: Վերջինը ողջամտորեն խնայել էր Թրամփին:

Մինչ իշխանամետ լրատվամիջոցները Թուրքիայում շեփորահարում էին, թե շուտով պատերազմ է սկսելու Հունաստանի հետ, շեղելու համար ժողովրդական բազմամիլիոնանոց զանգվածների ուշադրությունը սոցիալ-տնտեսական ծանրագույն խնդիրներից, տալով միաժամանակ Էրդողանին ընդդիմության ձայնը կտրելու պատեհ առիթ, թուրք հասարակությունը փաստորեն անտարբերություն դրսեւորեց այդ ամենի հանդեպ: Թերեւս անկախ դիտորդներն արձագանքեցին շեփորահարողներին, մատնանշելով, որ Սիրիայում եւ Լիբիայում ձախողվելուց, տարածաշրջանում մեկուսացման դատապարտվելուց եւ Միջերկրականում կատարելապես օտարվելուց հետո ինչպե՞ս ենք պատերազմելու, մանավանդ որ լիովին դատարկ է պետական գանձարանը:

Ի տարբերություն թուրք հասարակության, Հունաստան-Թուրքիա հնարավոր պատերազմի հավանականությունը լուրջ մտահոգություն պատճառեց ԵՄ-ի երկրներին, դա լայնորեն քննարկվեց ամերիկյան ու եվրոպական մամուլում: Եթե անգամ կողմերի միջեւ լինեն առանձին բախումներ, դրանք հազիվ թե հանգեցնեն թուրք-հունական պատերազմի: Բայց լարվածությունը կողմերի հարաբերություններում ամեն դեպքում կպահպանվի: Ի դեպ՝ դա նոր երեւույթ չէ, առաջացել է դեռեւս 2018 թ. փետրվարի 6-ին,երբ Կիպրոսի Հանրապետությունը, Հունաստանի եւ Եգիպտոսի մասնակցությամբ, բնական գազի որոնման աշխատանքներ սկսեց Միջերկրականի տնտեսական ջրային գոտիներում, որոնց մեջ այնուհետեւ ներգրավվեցին նաեւ Լիբանանն ու Իսրայելը:

Դրան ի պատասխան, 2019-ի մայիսի 10-ին Հյուսիսային Կիպրոսի մատույցներում որոնման աշխատանքներին ձեռնամուխ եղավ նաեւ Թուրքիան, թե դրանք իրականացվում են «Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետության» տարածքային ջրերում, ուստի ինքն ունի դրա իրավունքը: Քանի որ ինքնակոչ այս հանրապետությանը բացի Թուրքիայից ոչ ոք չի ճանաչում, այդ թվում եղբայրական՝ Ադրբեջանը, ուստի աշխատանքներին բուռն հակազդեցությամբ արձագանքեցին նաեւ Հունաստանը, ԵՄ-ը, Եգիպտոսը, Իսրայելը եւ ԱՄՆ-ը: Նույն թվի հուլիսի 20-ին Կահիրեում հրավիրվեց Արեւելյան Միջերկրականի բնական գազի 2-րդ ֆորումը, մասնակցությամբ Իսրայելի, Իտալիայի, Հունաստանի, Կիպրոսի, Եգիպտոսի, Պաղեստինի եւ Հորդանանի էներգետիկայի ու բնական պաշարների նախարարների:

Թուրքական որոշ թերթերում դա բնութագրվեց որպես «Արեւելյան Միջերկրականում Թուրքիայի օտարման» ֆորում: Հիրավի, Թուրքիան կանգնել էր օտարվելու շեմին: Դա հատկապես նկատելի դարձավ 2019-ի օգոստոսի 6-ին, երբ Եգիպտոսը տնտեսական ջրային գոտիների բաժանման պայմանագիր ստորագրեց Հունաստանի հետ, որին շուտով Լիբանանի հետ միացավ նաեւ Իսրայելը:

Արաբական Միացյալ Էմիրությունների արտաքին հարաբերությունների գծով պետնախարար **Անվար Մուհամմադ Գարգաշը** ողջունեց եգիպտա-հունական պայմանագրի ստորագրումը, որը Թուրքիան ընկալեց որպես օտարման լուրջ ազդակ եւ ձեռնամուխ եղավ դիմել կանխարգելիչ միջոցների՝ Թունիսում եւ Ալժիրում ռազմաբազա խնդրելով այդ երկրների իշխանություններից, որոնք կտրականապես մերժեցին Էրդողանի խնդրանքը: Ստեղծված իրավիճակում Էրդողանն իր հայացքն ուղղեց դեպի Լիբիա եւ 2019 թ. նոյեմբերի 27-ին Տրիպոլիի ազգային համաձայնության կառավարության վարչապետ Ֆաիզ ալ-Սարաջի հետ ստորագրեց ջրային տնտեսական գոտիների սահմանազատման պայմանագիր:

Դրան հետեւեցին Կիպրոսի եւ Հունաստանի տարածքային ջրերում հորատման աշխատանքներ ձեռնարկելու թուրքական փորձերը: Թեեւ Հունաստանին դաշնակիցների, մասնավորապես Իսրայելի եւ ԵՄ-ի միջամտությամբ կասեցնել դրանք եւ թուրքական սեյսմիկ հետազոտական նավերը սկսեցին այնուհետեւ այդ աշխատանքները իրականացնել Կիպրոսի արեւելքում, սակայն Թուրքիան մինչ այդ Էգեյան ծովում եւ Միջերկրականում ինքնակամ ընդլայնել էր տարածքային ջրերը, խախտելով ինչպես Հունաստանի, այնպես էլ Կիպրոսի ջրային սահմանները, այն աստիճանի, որ Հունաստանին պատկանող Էգեյան կղզիները, մասնավորապես Կրետեն, Կերպեն եւ Մեյզը հայտնվեցին թուրքական ջրերում: Մինչդեռ նավարկության միջազգային իրավունքի նորմերով ջրային տարածք է հասկացվում նաեւ կղզիներին, ինչպես նաեւ օդային:

Ինչ վերաբերում է Տրիպոլիի հետ ստորագրված պայմանագրին, նախ ասենք, որ Ալժիրին սահմանակից Տրիպոլին Թուրքիայի ափերից 2 հազար 200 կմ. հեռավորության վրա է: Ուստի Տրիպոլիի եւ Թուրքիայի, այսպես կոչված, տնտեսական ջրային գոտիների շփման գիծը՝ խիստ կարճ է: Թուրքիան այդ բացը լրացնելու համար ջրային գոտին անցկացրել է Ռոդոս կղզու առափնյա ջրերով, իսկ Կիպրոսի Հանրապետությանը «Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետության» տարածքային ջրերի պատրվակով 3 կողմից շրջափակել իր նախանշած ջրային սահմաններով:

Այս ամենը, սակայն, չխանգարեց Թուրքիային Կիպրոսի Հանրապետությանը մեղադրելու կղզու հյուսիսային թուրքական հատվածի իրավունքները ոտնահարելու, իսկ Հունաստանին՝ Էգեյան



կղզիների ջրային տարածքներն ընդարձակելու, այսինքն 6 մղոնից 12 մղոնի հասնելու մեջ: Հիրավի, Հունաստանն ունի այդպիսի մտադրություն, սակայն ոչ թե Էգեյան, այլ ինչպես նշել է վարչապետ **Կիրիակոս Միցոտակիսը**, Հոնիական ծովում: Հունաստանի վարչապետին «Halk TV»-ի էկրանից սեպտեմբերի 2-ին հաստատեց տիկ. Մերալ Աքշեների «Լավ» կուսակցության ազգային անվտանգության գծով պատասխանատու, նախկին դեսպան **Այթուն Չըրայը**, խիստ քննադատելով միաժամանակ Էրդողանին քաղաքականության մեջ դիվանագիտության դերն անտեսելու մեջ:

Էրդողանը Հունաստանին մեղադրում էր նաեւ Էգեյան կղզիների ջրային տարածքի հետ օդային տարածքն էլ ընդարձակելու, ապառազմականացված այդ կղզիները միակողմանիորեն ռազմականացնելու եւ թուրքական ջրային տարածքների սահմանը մշտապես խախտելու մեջ:Սակայն Լիբիայում, ապա Տրիպոլում տեղի ունեցած զարգացումներն ու իրադարձությունները էապես խախտեցին նրա հաշվարկները: Նախ օգոստոսի 21-ին վարչապետ **ալ-Սարաջն** ու գեներալ **Խալիֆե Խաֆթարը** եկան համաձայնության եւ ՄԱԿ միջնորդությամբ զինադադար հայտարարեցին Լիբիայում:

Այսպիսով երկրում ստեղծվեց խաղաղության եւ կայունության հաստատման բարենպաստ մթնոլորտ: Այնուհետեւ վարչապետ ալ-Սարաջը հայտարարեց, որ ինքը ստիպված է եղել համագործակցելու թուրքական իշխանությունների հետ, ապա պաշտոնից ազատեց ներքին գործերի նախարար Ֆաթխ Բաշաղային, որը վայելում էր Անկարայի անվերապահ աջակցությունը: Նրա դեմ Տրիպոլում սկսել է հետաքննություն: Թերեւս դա է պատճառը, թուրք քաղաքագետներից ոմանք ալ-Սարաջին ձեռքից բաց թողնելու մասին են խոսում: Դա վկայում է Լիբիայում Թուրքիայի կատարյալ ձախողման մասին:

Ի դեպ՝ Թուրքիան կատարելապես ձախողվել է նաեւ Սիրիայում: Ինչ վերաբերում է տարածաշրջանի երկրներին, ապա նրանք Եգիպտոսի գլխավորությամբ Արեւելյան Միջերկրականում համագործակցում են Հունաստանի եւ Կիպրոսի Հանրապետության հետ: Եթե Սաուդյան Արաբիան դեռեւս չի համագործակցում, ապա գոնե աջակցում է վերջիններիս: Ահա թե ինչու ընդդիմադիր քաղաքական գործիչներն ու անկախ դիտորդները Թուրքիայի ձախողումները, տարածաշրջանում մեկուսացումն ու ԵՄ-ի, ինչու չէ նաեւ ԱՄՆ-ի հետ հարաբերությունների լարվածության հետեւողականորեն սրումը միանշանակ պայմանավորում են Էրդողանի որդեգրած անհեռանկարային ու անհաշվենկատ քաղաքականության հետ, մեղադրելով նրան դիվանագիտության հնարավորություններն անտեսելու, նախապատվությունը հոխորտանքներին տալու, ինչպես նաեւ տարածաշրջանում լարվածություն առաջացնելը, որպես վարկանիշի բարձրացման միջոց դիտարկելու մեջ:

Նրանք միանշանակ ընդգծում են, որ նախագահ Էրդողանն այդ նպատակով Այա Սոֆիան վերածել է մզկիթի, ապա աչքալուսանք է տվել թուրք ժողովրդին, թե բնական գազ է հայտնաբերվել Սեւ ծովում, հիմա էլ սկսել հետեւողականորեն սրել հարաբերությունների լարվածությունը Արեւելյան Միջերկրականում:

# Արտասովոր ուսումնական տարվա սովորական խնդիրները

ՆԱԻՐ ՅԱՆ

Այս տարի նոր ուսումնական տարին սեպտեմբերի 1-ին սկսվեց միայն առաջին կուրսեցիների համար: Մյուս կուրսերի ուսանողների, նաեւ աշակերտների համար տարին սկսվելու է սեպտեմբերի 15-ից: Կորոնավիրուսի բարձր ցուցանիշ ունեցող Ռուսաստանը ուսումնական տարվա մեկնարկը չհետաձգեց, իսկ մենք հետաձգեցինք ու պարտադրելու ենք, որ բոլորը դասի նստեն դիմակներով: Եթե որեւէ մեկը կրթության ոլորտի փորձագետներին հարցներ, ապա նրանք կասեին, որ ուսումնական տարին ուշ սկսելուն դեմ են: Առանց այն էլ առաջին երկու շաբաթներն ադապտացիոն շրջան են լինելու, այսինքն՝ սեպտեմբերն ամբողջովին ենք կորցնելու, ինչն, անշուշտ, ազդելու է կրթության որակի վրա:

Փորձագետ **Սերոբ Խաչատրյանն** այլ տարբերակ էր առաջարկում՝ ուսումնական տարին սկսել օգոստոսի վերջին շաբաթներից, օրինակ՝ Շիրակում ու Գեղարքունիքում վաղուց արդեն շոգ չէ, կարելի էր դաս անել, միջին դասարանցիներին դպրոց ուղարկել սեպտեմբերի սկզբին. փուլային տարբերակով շատ ավելի հեշտ կլիներ հասկանալ՝ որտեղ են թերացումները, ինչ շտկումների կարիք կա: Միանգամից 380 000 հոգու սեպտեմբերի 15-ին ուղարկել ուսումնական հաստատություններ համավարակի պայմաններում, երբ փորձ չունենք. մեկ օրում կուտակել ամեն ինչ ու փորձել դրա տակից դուրս գալ ... դժվար է լինելու:

Հանրապետությունում միայն 950 դպրոց կա, որ մինչեւ 300 աշակերտ ունի, այսինքն՝ դասարանները կիսելու կարիք չի լինի, եւ միգուցե աշակերտների ջերմաչափումը, ձեռքերի ախտահանումը մի քիչ արագ ստացվի: Բայց ի՞նչ է սպասվում 300-ից ավելի աշակերտ ունեցող մեծ դպրոցներին: Ինչպե՞ս է իրականացվելու ջերմաչափումը, մատյաններում գրանցումները, ավելացրած՝ դիմակներով դաս անելն ու դասամիջոցին դասարանից դուրս չգալու արգելքը:

Շատ ծնողներ արդեն իսկ հրաժարվում են երեխաներին դպրոց ուղարկել, թեեւ հեռավար ուսուցումն ավելի գերադասելի չեն համարում: Մի խոսքով, 2020-ի ուսումնական սկիզբը անկանխատեսելի է, շարունակությունն էլ չգիտենք՝ ինչպիսին կլինի: Դպրոցներում այս օրերին արդեն պատրաստվում են դիմավորել աշակերտներին: Ուսուցչանոցները մեղվի փեթակ են հիշեցնում: Ի վերջո, բոլորի համար է աննախադեպ ուսումնական տարի, այդ թվում՝ ուսուցիչների: Դասացուցակն ամեն անգամվա նման չէ, դասապրոցեսը՝ նույնպես: Հայտնի չէ՝ առկա ուսուցումն ինչքան կտեւի:



Նույն իրավիճակը բուհերում է, սակայն սեպտեմբերի 1-ը քիչ թե շատ որոշակի դարձրեց գոնե առաջիկա մեկ շաբաթվա անելիքները: Բուհերը տարբեր կանոնակարգ ունեն: ԵՊՀ-ում, օրինակ՝ շաբաթական առավելագույնը երկու օր է առկա ուսուցում թույլատրվում, մյուս օրերին ուսանողները պետք է սովորեն հեռավար: Այսինքն՝ դժվար չէ պատկերացնել, որ ինչպես շաբաթական 3 օր դպրոց հաճախող աշակերտներն են ուսումնական ծրագիրն ինքնուրույն անցնելու՝ տանը, այնպես էլ ուսանողներն են ինքնակրթությամբ զբաղվելու, որովհետեւ 1-2 օր առկա ուսուցումը դժվար թե լիարժեք կրթություն ապահովի: Այսքանով հանդերձ՝ մայր բուհում այս տարի վարձավճարները թանկացել են 70-160 հազար դրամով՝ թվերը լրիվ կլորացվել են: Օրինակ՝ տեղեկատվական անվտանգության ֆակուլտետում ուսման վարձը 540 000-ից միանգամից դարձել է 700 000: Ֆիզիկայի, կենսաֆիզիկայի, միջուկային ռեակտորների ֆիզիկայի բաժիններում ԿԳՄՍ նախարարությունը տեղերը կրճատել է 7-10-ով, բայց վարձավճարն ավելացել է 70 000-ով: Նույն պատկերն է պատմության, աշխարհագրության, երկրաբանության ֆակուլտետներում, որտեղ միանգամից 17-18 տեղ է կրճատվել: Հայ բանասիրության ֆակուլտետում անցյալ տարի 120 տեղ է եղել, այս տարի 70 է, ռեկորդային կրճատում է արձանագրվել տնտեսագիտական ֆակուլտետում՝ միանգամից 52 տեղ: Անցյալ տարվա 120 ուսանողի փոխարեն այս տարի կսովորի 70 հոգի: Նույն սկզբունքով կրճատվել են լեզուների ֆակուլտետների տեղերը: Իրավագիտությունում ուսման վարձը ավելացել է 130 000 դրամով ու դարձել 1 միլիոն դրամ:

Ընդհանուր առմամբ ԵՊՀ-ում ԿԳՄՍ նախարարությունն այս ուսումնական տարում 512 տեղ է կրճատել: Իսկ անկախ կրճատումներից ու հենց կրճատված ֆակուլտետներում թափուր տեղեր են մնացել:

Ինչո՞վ է պայմանավորված վարձավճարների թանկացումը: ԵՊՀ-ի ղեկավարությունը պատճառաբանում է, թե դասախոսների աշխատավարձը մինչեւ հիմա շատ քիչ է եղել, պետք է այսկերպ բարձրացնեն:

Ուսումնական տարին դեռ առջեւում է, ու ժամանակը ցույց կտա՝ կբարձրանա՞ն եւ որքա՞ն կբարձրանան դասախոսների աշխատավարձերը: Հայտնի է, որ դրանք միշտ էլ անհավասարաչափ են եղել: Քիմիայի ֆակուլտետի դասախոսը 5-6 անգամ քիչ աշխատավարձ է ստանում իրավաբանականի դասախոսից: Բայց եթե ուսման վարձավճարների հաշվին պետք է աշխատավարձերը բարձրանան, ուրեմն նույն քիմիայի, ֆիզիկայի, երկրաբանության ֆակուլտետներում, որտեղ այն ժամանակ էլ դիմորդները քիչ են եղել, ուսման վարձը՝ անհամեմատ նվազ, ու թափուր տեղերը՝ շատ, այս տարի էլ իրավիճակային փոփոխություն չկա՝ թափուր տեղերը շատ են, դիմորդները՝ քիչ, ուսման վարձը բարձրացնելով հանդերձ՝ դարձյալ տնտեսագիտականի ու իրավաբանականի համեմատ՝ բավականին քիչ: Ուրեմն ի՞նչ հիմքով են բարձրանալու պահանջարկ ու այսպես ասած՝ հեղինակություն չունեցող ֆակուլտետների դասախոսների աշխատավարձերը:

Ակնհայտ է, որ բոլոր բուհերում հանրային կառավարման, մենեջմենթի, գովազդային ուղղության՝ PR-ի մասնագիտությունները խիստ պահանջված են, ընդունելության մրցույթն էլ բարդ է եղել: Անցել են միայն բարձր միավորները: Ցավալի է, բայց փաստ. աշխատանք, ջանք ու եռանդ, խոր գիտելիքներ, մտավոր ունակություններ պահանջող ֆիզիկան ու առհասարակ բնագիտական ուղղությունները շարունակում են մնալ ստվերում:

Դեռ սովետական տարիներից ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ասպարեզում հավասարը չունեցող Հայաստանը, որ դարակազմիկ բոլոր գյուտերում հիմնարար մասնակցություն է ունեցել, հիմա արհամարհում է գիտության ոլորտը: Դե իհարկե, ո՞վ կուզի ամբողջ կյանքում ֆիզիկայի խորխորատներում գլուխ ջարդել, հետո էլ մարդավայել աշխատանք չգտնել: Իսկ PR-ով, մեդիա, IT ոլորտներով զբաղվելու համար ի՞նչ գիտելիք, ի՞նչ գիտական ունակություն... ճարտար լեզու, դիմացինին խաբելու, իլյուզիաներ ստեղծելու, գրավելու ունակություն եւ վերջ. աշխարհը ոտքիդ տակ է, անձնական հաշվեհամարիդ էլ՝ բազում զրոներով գումար:

Այս ամենը հրաշալի գիտակցում են պատանիներն ու երիտասարդները: Եթե ֆիզիկան նրանց տարերքն է, գյուտը՝ օժտվածության արգասիքը, ապա նրանք ապագան փնտրում են ոչ թե հայրենիքում, այլ ճանապարհներ են որոնում, որպեսզի մեծ աշխարհ դուրս գան: Ֆիզմաթ դպրոցի պատանի գյուտարարները կապշեցնեն օտարերկրացի որեւէ ֆիզիկոսի, բայց նրանք հիմիկվանից Հայաստանից դուրս գալու ծրագրեր են մշակում: Մեղադրել չենք կարող նրանց, որովհետեւ գիտությունը, լուրջ բնագավառներում խորամուխ լինելը մեզանում չի խրախուսվում, իսկ խրախուսվելու ամենաիրատեսական ու գոհացուցիչ տարբերակը լավ վարձատրությունն է, որը չենք ապահովում: Այդ պատճառով էլ մեր ֆիզիկոսների աչքը դրսում է, իսկ ովքեր այդ շանսերը մոտ ապագայում չեն տեսնում, ճանապարհի կեսից ձեռք են քաշում բնական գիտություններից ու այլ ոլորտներով հետաքրքրվում:

Հայաստանում երիտասարդների 43 տոկոսը գործազուրկ է: Համաշխարհային բանկի տվյալներով թիվն ավելի բարձր է՝ 58 տոկոս: Սա ոչ թե վատ, այլ սահմռկեցուցիչ ցուցանիշ է: Նշանակում է՝ ամեն երկրորդ երիտասարդը գործազուրկ է: Ուսանողներն արդեն առաջին կուրսից են ուզում աշխատանք գտնել, որովհետեւ ներքին վախ ունեն, որ բուհն ավարտելուց հետո դիպլոմը ձեռքներին՝ բազում դռներ են թակելու: Աշխատելու, ստեղծելու, զարգացնելու, առաջ գնալու մեծ պոտենցիալ է մսխվում, մեծ կապիտալ, որի անունը գիտելիք է: Իսկ մակերեսային, ծանծաղ, միայն վարվեցողության կանոններ, դիմացինին հոգեբանական ծուղակ գցելու ունակություններ պահանջող մասնագիտությունները պահանջված ու հարգի են: Սակայն ոչ բոլորն են տիրապետում այդ հմտություններին, խաբել ոչ բոլորն են կարող, ուրեմն գիտակ, բայց ազնիվ լինելու համար գնան կորչե՞ն:

Երիտասարդներն ինքնադրսեւորվել, իրենք իրենց ճանաչել, ունակությունները կոփել են ուզում: Պետության դերը նախ երիտասարդների ներուժը ճիշտ գնահատելու, տեսակավորելու, ունակությունների ու հատկանիշների անձնագիր ստեղծելու, հետո՝ օգտագործելու ու վարձահատույց լինելու մեջ է:

# Գյուղոլորտ. զահլա չկա՞

ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ

Հայաստանյան առօրյան անակնկալներով լի է, սկսած տնտեսականից ու քաղաքականից, մինչեւ անձնական ու համայնքային: Սպասումների տրված հանրությունն ակնկալում է, որ հերթական բացվող օրն իր հետ դրական լիցքեր պարունակող իրադարձություններ կբերի, մեր մարդկանց կյանքն ու կենցաղը կբարելավվի: Տարօրինակորեն թե ցավալիորեն ՀՀ իշխանությունների որոշ ձեռնարկումներն էլ որեւէ ձեւով իրենց ազդեցությունը չեն թողնում մեր մարդկանց առօրյայի վրա: Ընդհանրական ձեւակերպումներից խուսափելու նպատակով ասելիքս ներկայացնեմ կոնկրետ օրինակով:

Օրեր առաջ ՀՀ վարչապետը Սյունիքում էր, հանդիպեց գյուղական համայնքների բնակիչների հետ: Թվում էր գյուղոլորտին աջակցության ՀՀ կառավարության ձեռնարկումները պետք է որ բարերար միջավայր ստեղծած լինեին գյուղաբնակների ու գործադիր իշխանության միջեւ, մարդիկ գոհունակությամբ ու ընդգծված նշեին այդ մասին: Սակայն ստիպված ենք «ավաղ» բառն օգտագործել, քանզի հեռուստահաղորդումների տեսքով այցի լուսաբանման ընթացքում դրականի մասին գրեթե կամ ընդհանրապես չխոսվեց: Հատկապես տպավորվեց անասնապահների ու իշխանավորների զրույցը. յուրօրինակ էր գյուղաբնակների այն պահանջը, որով առաջարկվում էր մթերվող կաթի գինը հասցնել 250-300 դրամի, միսն էլ 2200-2400 դրամի, արգելելով արտերկրներից կաթի փոշու եւ խորը սառեցված մսատեսակների ներկրումը: Վարչապետն իհարկե փորձեց բացատրել, որ այդ պարագայում կտուժի քաղաքաբնակ սպառողը: Պարզապես չասվեց, որ վերջինս իր հերթին կբարձրացնի սեփական ծառայությունների ու սպասարկումների արժեքը եւ երկիրը կհայտնվի վտանգավոր մի շրջապտույտի մեջ:

Թե ինչու է նման մոտեցումով զրույց առաջանում, պարզից էլ պարզ է. մեր գյուղաբնակի պահած կովի տարեկան կաթնատվությունը հազիվ 2000 լիտր է, խոշոր եղջերավորի ու խոզի օրական քաշաճն էլ 150-200 գրամ, այլոց 1000 գրամ պլյուս-մինուսի պարագայում: Արդյունքներն այսչափ նվազագույն են, քանզի ան-ասունները խոսել-դժգոհել չեն կարող իրենց տերերի պահվածքից, որոնց ստեղծած անասնակերը հիմնականում չոր խոտն է, որը պարզվեց՝ այս տարվա երաշտի պատճառով էապես պակասել է. ելքն անասնապահությունից հրաժարվելն է, իր տխուր հետեւանքներով:

Ակամա հիշում ենք եվրոպացի ֆերմեր-կաթարտադրողների ակցիաները՝ կաթը փողոցներում դատարկելու հետ կապված: Նրանք դժգոհում էին կաթի լիտրի դիմաց 20 եվրոցենտ գնից, երբ մեզանում մթերվողը նվազագույնը 25 եվրոցենտ է եւ ավելի: Պարզապես եվրոպացի անասնապահները կայանում ու հարստանում են, որովհետեւ լիարժեք կերակրման արդյունքում կովերի միջին կաթնատվությունը կազմում է 10 հազար լիտր: Մեր վաստակաշատ գիտնականներից **Լեւոն Գարեգինի Վարդեւանյանը**, գյուղատնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, տարիներ առաջ 250 էջերից բաղկացած մի ուսումնասիրություն-ձեռնարկ է կազմել «Գյուղատնտեսական կենդանիների կերակրման նորմաներ եւ կերաբաժիններ. կերերի սննդարարություն» հարցերի շուրջ: Օրինակ, 94-րդ էջում կարդում ենք. 600 կգ կենդանի զանգվածով լիահաս կթու կովերի կերակրման նորմաներ: Նշվում է կերաբաժնի 23 բաղադրիչ, որն էլ որակվում է որպես խտացված լիարժեք անասնակեր: Կաթնամթերք արտադրող առեւտրային կազմակերպություններից կաթնատու գլխաքանակ ունեցողները մասամբ օգտվում են այսօրինակ կերերից, որի արդյունքում կովերի միջին տարեկան կաթնատվությունը կազմում է 4-4,5 տոննա, ծղոտով կերակրվողի դիմաց կրկնակի արդյունք:

Այսօրինակ հարցերի մասին մեզանում չգիտես ինչու ընդունված չէ խոսել: Միայն երբեմնի գյուղնախարարության, հիմա արդեն ոլորտը ղեկավարող ՀՀ էկոնոմիկայի նախարարության ռազմավարական հռչակվող փաստաթղթերից կարելի է տեղեկանալ, որ անասնակերերի արտադրության նպատակով ցանքատարածությունների ընդլայնումներ են սահմանվում: Գյուղաբնակներն այն առանց երկմտելու կոչում են՝ անունը կա, ամանում չկա հայտնի արտահայտությամբ:

Անշուշտ լրագրային էջն այսօրինակ հարցերի շուրջ խոսելու տեղ չէ: Դրանք գյուղգործունեություն- գյուղքաղաքականություն ձեւաչափերով հարկ է քննարկել գործադիր մարմիններում, որոնց գործունեությունը թերեւս հուշում է՝ զահլա չկա:

Ինչ-որ բան ինչ-որ տեղ պահանջվող ձեւով չի արվում:

# Լիբանան: Թուրքիայի Օսմանյան փառասիրությունների թիրախը

ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ

Դետրոյթ, ԱՄՆ

Մինչ Հայաստանը մտահոգված է Կովկասում Ադրբեջանի միջոցով ընթացող թուրքական ծավալապաշտական նկրտումների, իսկ եվրոպական երկրները տագնապած՝ հունական եւ կիպրական ջրային տարածքներում Թուրքիայի արկածախնդրությունների պատճառով, Անկարան իր շոշափուկներն է երկարում դեպի Լիբանան, որտեղ շուրջ մեկ հարյուրամյակ արդեն գոյություն է ունեցել հայկական բարգավաճ մի համայնք:

Հայերն այդ երկրում ապահով ապաստան էին գտել Ցեղասպանությունից հետո եւ դպրոցների, եկեղեցիների, մշակութային կենտրոնների, թերթերի եւ մարզական ակումբների լայնածավալ, բայց կազմակերպված ցանցի միջոցով կազմավորել էին ինքնաբավ մի համայնք, որն ուներ նաեւ իր քաղաքական կշիռը եւ ներկայությունը երկրի պետական ղեկավարման կառույցներում: Ավելին, լիբանանահայությունը կարողացել էր կրթական եւ մշակութային իր ներուժը նաեւ արտահանել արեւմտյան երկրների այլ հայկական համայնքներ:

Այժմ, այդ ամենը փշրված է, ընդհատված, որպես հետեւանք նախ այդ երբեմնի բարգավաճ երկրի ինքնակործանման, եւ երկրորդ՝ Թուրքիայի չարագուշակ ներկայության:

Ցույց տալու համար, թե ինչքան է փոխվել քաղաքական կյանքը Լիբանանում, բավական է հիշել, որ նախկինում, երբ հայերն այնտեղ ապրիլի 24-ին ամեն տարի նշում էին Ցեղասպանության տարելիցը, ամբողջ երկիրն էր միանում նրանց՝ փակելով բոլոր խանութներն ու կառավարական գրասենյակները: Հիմա, երբ հայազգի հեռուստահաղորդավար **Նշան Տեր-Հարությունյանը** ամռան սկզբին քննադատեց տարածաշրջանում նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի անօրեն քաղաքականությունը, նա հայտնվեց դատարանում: Ավելին, հաղորդումից անմիջապես հետո իր հեռուստակայանը շրջապատվեց վրդովված ամբոխի կողմից, որ թուրքական դրոշներ ծածանելով սկսեց սպառնալ հայերին: Նրանք իրենց «Մարդինլի» էին անվանում եւ երդվում հավատարիմ մնալ Թուրքիային: Թուրքական կառավարությունը վրդովմունք արտահայտեց նաեւ այն ժամանակ, երբ Լիբանանի նախագահ **Միշել Աունը** բարձրաձայնեց, որ օսմանյան կառավարիչները 1915-ին արհեստական սով էին առաջացրել Լիբանանում՝ սպանելու համար նրա քաղաքացիներին:

Երկար ժամանակ է, ինչ Թուրքիան Լիբանան է ներթափանցում առեւտրի, հեռուստատեսային ծրագրերի եւ այսպես կոչված բարեգործական աշխատանքների միջոցով:

Լիբանանը միշտ էլ բաց հարթակ է եղել ինչպես միջին-արեւելյան բոլոր մրցակից արաբական երկրների, այնպես էլ քաղաքական հակամարտությունների, եւ 1982-ից ի վեր նաեւ Իսրայելի համար, երբ վերջինս զավթեց Հարավային Լիբանանը: Գլխավոր հակամարտություններից մեկը սուննի մահմեդականների եւ շիաների միջեւ է, մի տարաձայնություն, որը բորբոքվում է մասնավորապես Արեւմուտքի կողմից, շեղելու համար արաբների բարկությունը Իսրայելից դեպի Իրան: Արեւմտյան լրատվամիջոցները արդեն բավական ժամանակ է, ինչ փորձում են համոզել արաբներին, որ իրական թշնամին Իրանն է, ոչ թե Իսրայելը, չնայած վերջինս է, որ զավթել է Արեւմտյան ափն ու Գազան, Գոլանի բարձրավանդակն ու Լիբանանի օդային տարածքը:

Հեգնական թվացող շրջադարձ էր, երբ Իսրայելի գաղտնի գործակալության՝ Մոսադի տնօրեն **Յոսի Քոհենը**, ըստ լոնդոնյան «Թայմս» պարբերականի, տեղեկացրեց Եգիպտոսի, Սաուդյան Արաբիայի եւ Արաբական Միացյալ էմիրությունների հետախույզներին, որ «Իրանի հզորությունը դյուրաբեկ է, իսկ իսկական սպառնալիքը Թուրքիան է»:

Մինչ օրս Թուրքիան օգտվել է սուննիների եւ շիաների միջեւ առաջացած կրոնական հակասություններից միշտ, իհարկե, ձգտելով գերակայությունը տալ առաջիններին՝ սուննիներին եւ ստանձնել տարածաշրջանի ղեկավարությունը, մի հանգամանք, որն իր հերթին զայրույթն է առաջացրել Սաուդյան Արաբիայի եւ Եգիպտոսի, որոնք իրե՛նք են ցանկանում այդ դափնիին տիրանալ: Իրանն, իհարկե, Հզբոլլահի միջոցով վերահսկում է շիաներին:

Բեյրութի նավահանգստի օգոստոս 4-ի պայթյունից ի վեր բազմաբնույթ օգնություն տեղափոխող ինքնաթիռներ Լիբանան են ժամանում աշխարհի տարբեր վայրերից՝ Եգիպտոսից, Մարոկկոյից, Սաուդյան Արաբիայից, Ռուսաստանից, Հայաստանից եւ 30 այլ երկրներից:

Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը առաջին պետական գործիչն էր, որ ժամանեց եւ ավերված շրջաններում շրջագայելով հանդիպեց ժողովրդի հետ: Տեսարանը ամենայն հավանականությամբ վրդովեցրեց Էրդողանին, որ



նույն օրն իսկ փոխնախագահ Ֆուադ Օքթային եւ արտգործնախարար Մեվլութ Չավուշօղլուն ուղարկեց դեպի վայր: Նրանք խոստացան վերակառուցել նավահանգիստը եւ քաղաքացիություն շնորհել բոլոր նրանց, ում նախնիները թուրք կամ թյուրքմեն են:

Տեղ հասնող ամեն մի օգնություն չէ, սակայն, որ անհատույց է տրվում: Դրանցից ոմանք, հատկապես վերակառուցման ծրագրերին մասնակից պետությունների կողմից ուղարկվածները, որոշակի պարտավորությունների դիմաց են տրվում, իսկ վերակառուցման համար նախատեսվում է մոտ 100 միլիարդ:

Սաուդյան Արաբիան, որ Լիբանանի ֆինանսական օժանդակություն տրամադրելը դադարեցրել էր նախկին վարչապետ Սաադ Հարիրիի հետ որոշ անհամաձայնություններից հետո, որոշել է առատաձեռնորեն միանալ վերակառուցման աշխատանքներին, որպեսզի արգելակի Թուրքիայի ներկայությունը Լիբանանում:

Թուրքիայի կառավարության կրոնական թեւը հանդիսացող «Դիյանեթը» ծրարների մեջ կանխիկ փող է բաժանել սուննի համայնքի անդամներին: Ակնհայտ է, որ կողմերը փորձում են շահագործել Լիբանանի ժողովրդի դժբախտությունը: Թուրքիան առաջին հերթին՝ գործի դնելով ներթափանցելու իր վաղեմի միջոցները, որոնք արդյունավետ ձեւով օգտագործել էր Իրաքում եւ Սիրիայում, զինում է իր վարձկաններին եւ ոճրագործներին, որոնք ավերեցին Սիրիան եւ հիմա ավերում են Լիբիան: Թուրքիան ամուր քաղաքական հենակետեր է ստեղծել հյուսիսային Լիբանանի Տրիպոլի եւ Աքքար քաղաքներում: Վերջերս արված լուսանկարները ցույց են տալիս, որ Թուրքիայի «բարեգործական» միջոցառումները դեպի ներքեւ սողոսկելով հասել են Ջունիե, որտեղ թուրքական բեռնատար նավերն են խարիսխ գցել «օգնելու» համար տեղի անտեսված էլեկտրականության համակարգին: Ջունիեն հիմնականում քրիստոնյաներով բնակեցված վայր է Անթիլիասի հայոց կաթողիկոսարանի հյուսիսում: «Օգնությունը» ներառում էր նաեւ զենքի բաժանում, որի առթիվ թուրքական ծանոթ ձեռագրին անդրադառնալով անգլերենով հեռարձակվող «Էլ-Արաբիյե» լրատվամիջոցը հաղորդել է. «Մենք խիստ մտահոգված ենք այն ամենով, ինչ կատարվում է: Թուրքերը անհավատալի քանակությամբ զենք են տեղափոխում հյուսիս»: Հաղորդման ընթացքում մեջբերվել են լիբանանյան բանակի հետախուզական աղբյուրների տվյալները:

Հենց այս նույն ձեւով Թուրքիան պատերազմ հրահրեց Սիրիայում, ներթափանցելով այդ երկիրը եւ իր վարձկաններին զենք մատակարարելով: Դա աչք ծակող արտաքին ներխուժում էր, որ արեւմտյան մամուլը, Թուրքիայի հետ լուռ պայմանավորվածությամբ, որակեց «քաղաքացիական պատերազմ»:

Ըստ երեւույթին միեւնույն սցենարն է գործի դրվում Լիբանանում, որտեղ այնքան էլ դժվար չէ քաղաքացիական պատերազմ հրահրելը: Դա տեղի է ունեցել արդեն մի քանի անգամ՝ 1958-ին եւ հետո նաեւ 1970-ականներին, որը տեւել է 15 տարի եւ ավարտվել Սաուդյան Արաբիայում 1989-ին ստորագրված «Թա՛եֆի համաձայնությամբ»: Լիբանանի ներսում թե դրսում գտնվող որեւէ խմբավորում կարող է մի եկեղեցի կամ մի մզկիթ պայթեցնել իր հետախուզական ծառայությունների միջոցով եւ մեղադրել հակառակորդ խմբակցությանը կամ համայնքին: Իսկ հաջորդ քայլն արդեն միմյանց կոկորդ կրծելն է: Բանակն իր հերթին բաժանվում է կրոնական պատկանելիության հիման վրա եւ, խնդրեմ, փոթորիկը սանձազերծված է:

«Ջերուսալեմ փոստ» պարբերականում անցյալ շաբաթ հրատարակված մեկնաբանությունը նշում էր. «Մի մարդ, որ ժառանգել էր ամերիկյան եւ եվրոպական աջակցությամբ կառուցված մի խոստումնալից տնտեսություն, այժմ իր երկիրը դեպի սնանկացում է առաջնորդում: «Օսմանյան ժառանգությունը» վերականգնելու իր մոլուցքի մեջ արյուն եւ ավերածություն է պատճառում ոչ միայն իր սեփական ժողովրդին, այլեւ արաբական երկրների հարյուրավոր անմեղ քաղաքացիներին: Էրդողանը, որ խոստացել էր իր երկրում իրականացնել ժողովրդավարական բարեփոխումներ, մեջքով շրջվել է Թուրքիայի ժողովրդավարական հաստատություններից եւ դրանց զետեղել «Մահմեդական եղբայրների» նման կազմակերպությունների ամուր սեղմակի մեջ»:

Օսմանյան ժառանգության հետապնդումը Հայաստանին եւ հայերին սպառնացել է բոլոր ճակատներում՝ երեկ հարեւան Ղարաբաղում, իսկ այսօր՝ Լիբանանում:

Արաբական աշխարհում, հանրային կարծիքի համաձայն, Էրդողանի նպատակն է տարածել իր իշխանության ազդեցությունը ոչ միայն Լիբանանում, այլեւ դրանից այն կողմ: Այդ ընթացքում, անշուշտ, հայկական համայնքն է կրելու անուղղակի հարվածի առաջին վնասները:

Սիրիական պատերազմի ժամանակ Էրդողանի թիրախը Բաշար էլ-Ասադի իշխանությունն էր, բայց իր կողմից լիազորված վարձկանները մեծ ջանք գործադրեցին ռմբակոծելու Հալեպում գտնվող հայկական թաղամասերը, ամբողջովին ավերելու Դեր Զորն ու Քեսաբ քաղաքը:

Եթե Էրդողանը օսմանյան երազանքի մոլուցքով է տարված, ապա նրա մտքում պետք է որ դրոշմված լինեն օսմանյան ղեկավարների նպատակները: Երբ, օրինակ, ժամանակին ամերիկացի դեսպան **Հենրի Մորգենթաուն** հարցրել էր **Թալեաթ փաշային**, թե ինչու անմեղ հայ երեխաներին էլ են կոտորում, վերջինս պատասխանել էր ցինիկաբար, «որովհետեւ նրանք կարող են մեծանալ եւ իրենց հայրերի վրեժը լուծել»:

Այդ ուղերձը շարունակում է իր մտքում զրնգալ Սեւրի համախտանիշի տեսքով: Որեւէ հայ, որ իր սահմանումով «սրի ավելցուկ» է՝ հիշեցնելու է նրան այդ վրեժի մասին, որից Թալեաթը վախենում էր:

Լիբանանում Էրդողանը հույսը դրել է քաղաքական զարգացումների երկու սցենարների վրա: եթե Լիբանանը դուրս գա ճգնաժամից եւ շարունակի ղեկավարվել 18 դավանանքային խմբավորումների կողմից, ապա ինքը կարող է այդ իշխանությանը մաս կազմել իր օսմանամետ համախոհների միջոցով: Իսկ եթե Լիբանանը խրվի քաղաքացիական պատերազմի մեջ եւ արդյունքում մասնատվի, մի հանգամանք, որ որոշ հարեւաններ կանխատեսում են, ապա ինքն իր ծրագրերը կիրականացնի հյուսիսում իր մարտունակ վարձկանների միջոցով:

Լիբանանում ծայր առած վերջին քաղաքացիական պատերազմի ժամանակ հայերը խելամտորեն չեզոք դիրք էին բռնել, չմիանալով կողմերից ոչ մեկին: Այս անգամ էլ նրանք այլընտրանք չունեն եւ պարտավոր են շարունակել իրենց այդ քաղաքականությունը:

Թարգմ. ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ
(The Arm. Mirror-Spectator)

***Խմբ. կողմից.-*** *Տեղեկացնենք, որ Լիբանանի նախագահ Միշել Աունը օրերս հայտարարել է, որ անհրաժեշտ է փոխել երկրի համակարգը, որը նշանակում է ազատվել համայնքային դրությունից եւ անցնել համաժողովրդական կառավարման մոդելի, որի պարագայում երկրի քաղաքացիների մեծամասնությունը կազմող շիաները հստակ հաղթանակած դուրս կգան հետագա ընտրություններում: Ուստի, նախագահի առաջարկը այժմվանից կարելի է գնահատել անիրագործելի՝ մնացած համայնքների ընդդիմության պայմաններում:*

# Բաքվի նոր թեման՝ նոր հուշարարներով

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

«Լիբանանահայերի վերաբնակեցումը ՝ ադրբեջանապատկան (հայկական զինուժի կողմից) գրավյալ տարածքներում հայկական կողմի ժողովրդագրական ագրեսիայի գործողություն է», ըստ «Ազերթաջ» ադրբեջանական պետական լրատվական գործակալության սեպտեմբերի 1-ին հրապարակված գերմաներեն տարբերակի, կարծիք է հայտնել ռուս քաղաքագետ, Ռուսաստանի քաղաքական հետազոտությունների ինստիտուտի փոխտնօրեն **Դարյա Գրեվցովան**: Ըստ նույն աղբյուրի, Գրեվցովան ասել է, թե «վարչապետ Փաշինյանին ձեռնտու է տարագիր լիբանանահայերին թե որպես էժան աշխատուժ ծառայեցնելը, թե որպես այդ տարածքների պաշտպան օգտագործելը: Ասվածն անշուշտ այն հայերին չի վերաբերում, որ կամենում են Լեռնային Ղարաբաղում բնակություն հաստատել, որ սակայն անտեղյակ են նոր բնակավայրին եւ այն իրողությանը, թե ԼՂ-ում կենսապայմաններն ավելի վատ են, քան Լիբանանում: Դեռ հարց է՝ լիբանանահայերը ցանկություն ունե՞ն Լեռնային Ղարաբաղում վերաբնակվելու, թե՞ ոչ: Հայկական կողմի նման գործելաոճի վերաբերյալ իր առարկությունն է հաղորդել նաեւ ԵԱՀԿ-ի նման ազդեցիկ կառույցը», ըստ «Ազերթաջի» գերմանական տարբերակի իր խոսքն է եզրափակել Գրեվցովան:

Նույն լրատվությունն առավել մանրամասն ներկայացվում է ռուսերեն տարբերակում: Հատկապես աչքառու է Գրեվցովայի հետեւյալ դատողությունը, որ բացակայում է գերմաներեն տարբերակում՝ «պատմությանը հայտնի են դեպքեր, երբ մարդկանց տարբեր երկրներից վերաբնակեցրել են, վերջիններս մնացել են, բնավորվել տվյալ վայրում, այնուհետ այդ հողերը սեփական են համարել»:

Ինչ վերաբերում է ԵԱՀԿ-ի մասին հիշատակմանը, ռուսերեն տարբերակում էլ գերմաներենի նման հստակ մեջբերում չկա, թե այդ կազմակերպությունն ի՞նչպես է արձագանքել խնդրո առարկային, եւ առավել համոզում, թե ԵԱՀԿ-ն գոնե այս հարցի առնչությամբ հրապարակային կարծիք ընդհանրապես չի արտահայտել: Բայց Գրեվցովան, հիշատակելով եվրոպական այս կառույցին՝ պարզում է իր պատվիրատուի նպատակը: «Միայն ԵԱՀԿ-ի կարծիքը բավարար չէ, անհրաժեշտ է, որ դրա մասին տեղեկանա միջազգային ողջ հանրությունը: Ադրբեջանի խնդիրն է իրազեկել աշխարհին այս հարցի մասին, քանզի շատերը տեղյակ չեն անգամ գրավյալ 7 շրջաններից: Այս հակամարտության մասին արդարամիտ տեղեկատվություն տպագրելը դժվար է, քանի որ, ցավոք, Եվրոպայի բազմաթիվ ԶԼՄ-ներ կամ հայկական սփյուռքին են պատկանում, կամ՝ խմբագիրը հայկական ծագում ունի: Ադրբեջանը պիտի ստեղծի զանգվածային տեղեկատվական իր ցանցը: Վերջինիս, ինչպես նաեւ միջազգային ֆորումներին մասնակցելու միջոցով պիտի ներկայացնի իր դիրքորոշումը», ըստ «Ազերթաջի» ռուսերեն տարբերակի հուշել է ռուս քաղաքագետը:

Նույն օրվա ռուսերեն լրահոսում վերոհիշյալ թեմայի մասին եւս երկու կարծիք է ներկայացվում: Ուկրաինացի պատմաբան **Օլեգ Կուպչիկը**, ինչպես նաեւ Կիեւի քաղաքական հետազոտությունների «Դոկտրինա» կենտրոնի ղեկավար քաղաքագետ **Յարոսլավ Բոժկոն** լիբանանահայերի վերաբնակեցման՝ Հայաստանի քաղաքականությանը կտրուկ գնահատական են տալիս՝ միջազգային իրավունքի կոպիտ խախտում այն որակելով: Պատմաբան Կուպչիկը հիշատակում է, թե նախկինում էլ սիրիահայերին են վերաբնակեցրել ԼՂ-ի տարածքում: Նրա տեսանկյունից, սրանով Հայաստանը ցույց է տալիս, որ չի ցանկանում խաղաղ, միջազգային իրավունքի նորմերի համաձայն հարթել ԼՂ հիմնախնդիրը: Ուկրաինացի պատմաբանն «անտարբեր» չէ, որ սիրիահայերին ու լիբանանահայերին, իր բառերով՝ «այսպես կոչված» ԼՂ քաղաքացիություն տրամադրել չեն կարող, շեշտադրելով, թե Հայաստանը պաշտոնապես չի ճանաչել ԼՂ- ն, իսկ ՀՀ քաղաքացիության շնորհումը հավելյալ ապացույց կլինի, որ Հայաստանը հակամարտության մասնակից է: Կուպչիկը նկատել է տալիս, թե Հայաստանն ի զորու չէ ֆինանսավորել վերաբնակեցման գործընթացը, ինչը սակայն ակնկալելի է, որ հնարավոր դարձնի դաշնակիցների աջակցությամբ: Քաղաքագետ Յարոսլավ Բոժկոն էլ կոչ է ուղղում միջազգային կազմակերպություններին, ԵԱՀԿ- ին, որ հստակ դիրքորոշում հայտնեն Հայաստանի՝ «գրավյալ տարածքներում արհեստական վերաբնակեցման» քաղաքականության մասին:

Մեզ մնում է սերտել միջազգային նորմերն այնպես, որ որեւէ հարթակում Բաքվի հանձնարարությունները կատարող պատմաբաններին ու քաղաքագետներին կես առ կես բացատրենք իրենց մոլորյալ լինելը: Հակափաստարկները միշտ կան, տվյալ պարագայում դրանք միայն մեր օգտին են:

# Փողոցային անակնկալներ

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

Հիմա տեղեր կան, որ թաքնված տեսախցիկին փոխարինում է թաքնված ոստիկանը: Այդպիսի մի օր, երբ երեկո էր, փողոցով քայլող միակ անցորդին շատ հուշիկ քայլերով մոտենում է ոստիկանը, այնպես որ անցորդը չզգա, հանկարծ ուսի վրայից լսի օտար շնչառություն. սա պետք է անակնկալ լինի, որ հոգեբանորեն ավելի ազդեցիկ լինի, ոստիկանը տեսադաշտում չպիտի երեւա: Թերեւս լավ է՝ մուտքի կամ պատի չերեւացող կողմում լինի. աչքից հեռու: Նա՝ այդ ոստիկանը, կիրթ, վայելուչ խոսելաձեւ ունի, մեղմորեն դիմակ է փնտրում դեմքիդ: Ուզում ես ասել, որ դիմակավորվելը համարում ես վատ բան, մանավանդ որ օդը մաքուր է, ու փողոցը դատարկ, հեղձուկ տոթը մի կերպ նահանջել ու շնչելու տեղ է թողել, որ թթվածնային քաղց, ալերգիա, շնչառական խնդիրներ եւ այլ բաներ կան, բայց հիմա դրա ժամանակը չէ, new normal է՝ միայն թուղթ ու ձեւականություն, անկեղծությունն ու մարդկայնությունը ո՞ւմ շունն են: Երիտասարդ ոստիկանը քեզ կնայի խոժոռ, արտահայտիչ աչքերով, կասի, որ ինքը աշխատանքի մեջ չի թերանում, անձնագրի պատճեննկարը կհամարի բավարար, համբերատար կսպասի, որ հեռախոսազանգին պատասխանես՝ բավականաչափ հեռանալով, կլսի նաեւ նեղսրտած խոսքեր: Ահա հետեւից կլսվի վրդոված երիտասարդի ձայնը՝ «Մակուլատուրայի նյո՞ւթ եք հավաքում, հերի՛ք չի մարդկանց կյանքը փչացնեք, էս ի՞նչ փորձանք բերինք մեր գլխին, այնպես եք անելու՝ նախկիններին երանի տանք»:



Դու կխոսես տուգանքի անհամապատասխանության մասին, թե այդ ինչպե՞ս է լինում, որ մի երկրում թղթե դիմակ չկրելը կազմում է աշխատավարձի մեկ վեցերորդ, մեկ յոթերորդ մասը, հետո կիմանաս, որ տուգանքներն էլ խտրականության տակ են...

Ոստիկանը համբերատար կլսի ձայները, հետո կասի, որ իր պարտքն է կատարում, բայց դու կարդում ես աչքերը՝ նա հո՞ չի ուզում մարդկանց վատություն անել...

Դու կհիշես, որ դեղատան համար էիր տանից դուրս եկել, լիցքաթափող, նյարդերը մի քիչ թուլացնող հերթական դեղը կվերցնես, փողոցը ավելի մռայլ ու նեղ կդառնա, կզգաս կրկնակի օտարություն ու կմտածես, թե ինչ մեղմ էին անցած բոլոր հիասթափությունները...

Հետո մի քիչ վերեւում երիտասարդ աղջիկներ հարազատավարի կմոտենան ու կասեն՝ այնտեղ ոստիկան կա: Ու դա կլինի օրվա գեղեցկությունը... Ասել է՝ թե դիմակը տուգանքից խուսափելու համար է, ոչ թե վիրուսից, հետո կհիշես ծանոթների խոսքերը, որ այս ամբողջ ընթացքում մեկ դիմակ են կրել, բացատրելով, թե ախտահանում, կամ լվանում են, քանի որ դա ոստիկանի համար է. իրականում հիգիենան ոչ մեկին չի՛ հետաքրքրում, մեր առողջությունը ոչ մեկին չի՛ հետաքրքրում: Ետդարձին կմոտենա տարիքով մեկը, կբողոքի շնչառական խնդիրներից, դիմակը կուզենա պոկել, երիտասարդ աղջիկները կզգուշացնեն դարանակալած վտանգների մասին: «-Բայց այսպես ինչքա՞ն կարող ենք ապրել»,- կասի մարդն ու կանցնի, նրան կարձագանքի մեկ ուրիշը փողոցի մյուս ծայրից: Չգիտեմ, Բեռլինում օրեր առաջ մի քանի հազարանոց բողոքի ցույց էր, Լոնդոնում՝ նույնպես:

Հետո կհիշես հայտնի խոսքերը. «Մարդկանց ստրուկ դարձնելու համար նրանց մեջ հարկավոր է վախ առաջացնել: Եթե իմանաք, թե ինչից են նրանք վախենում, դուք նրանց հետ կարող եք անել այն, ինչ ուզում եք»:

Տուն գալուց կհիշես, որ դեղից բացի հաց էլ էր հարկավոր գնել, ու դու մոռացել էիր:

# Հանգստացեք, երբ իրավիճակը թույլ կտա, իսկ մինչ այդ ձեզ հանգիստ պահեք

**Ասում են՝ Առողջապահության նախարար Արսեն Թորոսյանը շատ է հոգնել, գերհոգնել ու ելնելով դրանից՝ երկարաժամկետ արձակուրդ է վերցրել: Նույն գերհոգնածության ու լարվածության «փաթեթի» շրջանակներում արձակուրդում են գտնվում նաեւ երկրի վարչապետն ու նախագահը: Իհարկե, յուրաքանչյուր մարդ, լինի նախարար, զինվորական, թե շարքային քաղաքացի, ունի հանգստանալու իրավունք, եթե այդ նախարարի գլխավորած ոլորտը ճգնաժամ չի ապրում, եթե զինվորականի պաշտպանած հայրենիքը չի պատերազմում, եթե քաղաքացու վիճակը, ապրելակերպն ու պայմանները թույլ են տալիս: Այսպիսով՝ մարդիկ հանգստանում են:**

**Բայց չէ՞ որ հիմա պատերազմ է, ինչպես ամիսներ առաջ պնդում էր ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը՝ տգեղ բառեր նետելով նրանց հասցեին, ովքեր «պատերազմի ժամանակ անձնական խնդիրներ են լուծում»: Պատերազմ է, առողջապահական պատերազմ, եւ այս պատերազմի զորավարը, թող ինձ ներեն զինվորականները, Արսեն Թորոսյանն է, մի՞թե զորավարը նման ժամանակ իրավունք ունի արձակուրդ վերցնելու: Այսինքն՝ Արսեն Թորոսյանի արածն ի՞նչ է՝ անփութությո՞ւն, թե՞ դասալքություն. Տեր-Պետրոսյանն այս մասին ոչինչ չի՞ ուզում ասել, որպես լուրջ գիտնական եւ պետական գործիչ չի՞ ուզում ընդգծել, որ դա դավաճանություն է, սրիկայություն է. վախկոտություն:**

**Եթե առաջ քաշված խնդիրը չափազանցված համարեք, մի պահ պատկերացրեք, որ հուլիս ամսվա տավուշյան մարտերի ժամանակ ՊՆ նախարար Դավիթ Տոնոյանն արձակուրդ վերցներ, այն էլ երկարաժամկետ, եւ գնար հանգստանալու, եւ անհոգ դեմքի արտահայտությամբ լուսանկարներ հրապարակեր սոցցանցերում (ների՛ր այս օրինակի համար, պարոն Տոնոյան), այնպես, ինչպես արել է Արսեն Թորոսյանը:**

**Հուսով եմ՝ պարզ է, որ այդ քայլը կնույնացվեր դավաճանության հետ, ուրեմն եկեք հասկանանք՝ առողջապահական ճգնաժամի պայմաններում դիրքերը լքած առողջապահության նախարարը դավաճա՞ն է, թե՞ ոչ: Իհարկե, լավագույն սահմանումը կտա Առաջին նախագահը, որը երբեւէ տանել չի կարողացել դավաճանությունը, մանավանդ ազգային:**

**Նախագահ Արմեն Սարգսյանին չեմ էլ ուզում անդրադառնալ, ժպտերես մարդ է, լավ պարում է, բացի այդ Անգլիայի դեսպանն է ՀՀ-ում, թող հանգստանա, մանավանդ, որ երբեք էլ չի աշխատել: Բայց, այ, Նիկոլ Փաշինյանի վիճակը ծանր է:**

**Մարդը, որ պետության գերագույն-գլխավոր հրամանատարն է, եւ բոլորիս զգոնության կոչ է անում, արտակարգ դրություն է հայտարարել եւ հենց այդ պայմաններում էլ լքել ղեկավարի աթոռն ու գնացել հանգստի: Վստահ եմ՝ վարչապետը լավ է հասկանում՝ ինչ է նշանակում արտակարգ դրություն, բայց տարակուսում եմ՝ վարչապետը գիտի՞, թե՞ չգիտի, որ արտակարգ դրության ժամանակ պետության գերագույն գլխավոր հրամանատարը ոչ միայն չի կարող արձակուրդ գնալ, այլեւ չի կարող սոցցանցերում պարապ գրառումներ անել: Դա չգրված օրենք է, որը պահպանվում է շատ երկրներում: Ավելին՝ ոչ միայն վարչապետը, այլեւ ամբողջ պետական կառավարական համակարգն այս օրերին պետք է լծված լինի իր աշխատանքին եւ գոնե հիմա մոռանա գայթակղիչ պարգեւավճարների մասին, մանավանդ, երբ արտակարգ դրության համավարակը մեզ հանգիստ թողնելու համար մեծ գումարներ է պահանջում:**

**Իսկ այն հարցին, թե երբ պետք է հանգստանան այդ մարդիկ, հստակ պատասխանում եմ՝ երբ իրավիճակը թույլ տա, վերջիվերջո նրանք պատասխանատուներ են, եւ այդ պատասխանատվությունն ստանձնել են սեփական կամքով ու խնդրանքով՝ պնդելով, թե ժողովուրդն իրենց գործատուն է, իրենք էլ՝ ժողովրդի ծառան, վարձու աշխատողը: Ուրեմն ի՞նչ իրավունքով է ժողովրդի աշխատակիցը ժողովրդի դրամական միջոցներով հանգստանում, երբ ժողովուրդը նաեւ դրամական միջոցների բացակայությամբ՝ գտնվում է տարակուսանքի մեջ, ոչ աշխատանքային՝ պարտադիր արձակուրդի մեջ:**

**Ազատե՞նք աշխատանքից:**

**Մտահոգությամբ՝ ձեր գործատու՝**

ԳԵՎՈՐԳ ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ

ՍԵՐԳԵՅ ԳԱԼՍՏՅԱՆ
գրող, կինոգետ

# Բախչինյանական ներշնչանքներ

## *Ֆելիքս Բախչինյանի ծննդյան 70-ամյակի առիթով*

Այս ամռան տաք օրերից մի օր հեռուստատեսությամբ դիտեցի ֆիլմ, որի գրական հենքը կարդացել էի մի քանի տարի առաջ: Իսկ դա ամենեւին չխանգարեց, որ ֆիլմը դիտեի կլանված, զարգացող հետաքրքրությամբ ու որոշ խլրտումով:

Գնալով հիանում էի ընկերոջս (ընկերներիս) արվեստի նոր ժանրով հանդես գալու նախաձեռնությամբ եւ, որ ամենակարեւորն է, այդ բնագավառում ցուցադրելով ակնհայտ հաջողություն:

Խաղարկային այս ֆիլմը (67 րոպե տեւողությամբ) կոչվում է «Մի գիշեր Բարոն հյուրանոցում», ի տարբերություն վիպակի, որը կրում է «Մտորումներ Աթաթուրքի սենյակում» վերնագիրը:

Ֆիլմի սցենարի հեղինակը դարձյալ Ֆելիքս Բախչինյանն է, եւ նրա կատարած փոփոխությունը ինձ շահեկան թվաց... Սա հոգու պատմական դեգերումների սոսկ գրառում չէ, որտեղ բարու եւ չարի աներեւույթ բախման անակնկալ միջադեպին պարզվում են դառը, ողբերգական, բայց եւ պարզ ճշմարտություններ...

Ֆելիքս Բախչինյանը գրական աշխարհում հայտնի է որպես ճանաչված ու սիրված գրականագետ: Նա բազմաթիվ հոդվածների, մի շարք մենագրությունների հեղինակ է, լավ արձագանքներ են ունեցել բանաստեղծներ Հովիկ Հովեյանի, Հրաչյա Թամրազյանի, Հովհաննես Գրիգորյանի, Էդվարդ Միլիտոնյանի, Կամիլայի ստեղծագործություններին նվիրված մենագրությունները: Երկու տարի առաջ կարդացի նրա «Deja Vu» վեպը, որն արժանի է մի առանձին ամբողջական վերլուծության: Սակայն չեմ կարող գոնե չնշել, որ այն իր ոչ սովորական ոճի ու պատկերների շնորհիվ ընթերցվում է լիրիկական գողտրիկ բանաստեղծության նման, մեկ շնչով...Սա մի գեղեցիկ սիրո պատմություն է...

Հանճարեղ Փարաջանովը ուներ մի շատ սիրած աղոթք, այն է. «Թող կրկնապատկվի, եռապատկվի ամենայն վեհն ու գեղեցիկը»...Բախչինյանի վեպն ընթերցելիս հիշում եմ այս աննման աղոթքը եւ ուզում եմ անընդհատ մրմնջալ. «Թող կրկնապատկվի, եռապատկվի...»:

Սակայն վերադառնանք ֆիլմին:

Ֆիլմի հերոս կանադահայ գրողը Դեր-Զոր գնալու նպատակով ժամանել է Հալեպ, նոր է տեղավորվել հյուրանոցում: Նա գիտի թե՛ Հալեպի, թե՛ Սիրիայի հողում... չէ՛, ինչ եմ ասում, Սիրիայի ավազուտներում գազանաբարո ոհմակի կատարած բարբարոսությունների մասին...



Ինչ որ մտքեր են պաշարել նրան: Նրան պարուրել է անծանոթ մի անհանգստություն եւ... զգում է որ այդ բառը իր վիճակին շատ է «սազում». չէ՞ որ վաղը նա տեսնելու է հայկական ամենամեծ գերեզմանոցը:

Սփյուռքահայ մեր գրողը իջեւանել է Հալեպի «Բարոն» հյուրանոցում եւ դժվար է ասել` պատահականություն է, թե՞ ճակատագրի հեգնանք.նրան հատկացնում են այն սենյակը, որտեղ ապրել է թուրքերի հայր, ամենադահիճ թուրքը`Աթաթուրքը...

Ավելի քան մեկդարյա ժամանակահատվածում «Բարոն» հյուրանոցը շատ բան է տեսել ու եղել է համր վկան: Այստեղ իջեւանել են հայտնի մարդիկ` թագավորներ, իրենց թագուհիներով, Թեոդոր Ռուզվելտը, նույնպես տիկնոջ հետ, հայտնի Ռոքֆելլերը, գրողներ Վիլյամ Սարոյանը, Ագաթա Քրիստին, տիեզերագնացներ Յուրի Գագարինը, Տերեշկովան: Թուրքերի տիրապետության տարիներին, եղեռնական 1915 թվականին, հյուրանոցի նկուղային հարկում ապրել է Գրիգոր Զոհրապը:

Եվ հայ գրողը ինչպե՞ս չիջներ նկուղային հարկ, չմտներ այդ սենյակը, որտեղ Զոհրապի ցնցված հոգին է թեւածել, որտեղ կյանքի վերջին օրերն է մաշել հայ գրականության երեւելի մշակը, որն առաջին իսկ երկերի երեւան գալուն պես մեծարվեց որպես «Փառավոր հայտնություն», եւ ֆիլմի հերոսը մատուռ հիշեցնող սենյակի կիսախավարի մեջ Ավետարան ու մոմ է փնտրում, խնկի հոտ ու պատարագի ձայն է որսում...

Եվ հենց այստեղ է, որ ուզում եմ անդրադառնալ խաղարկային այս ֆիլմի հերոսի` կանադահայ գրողի կերպարին, թե այդ ո՞վ էր նրան մարմնավորողը: Այդ ո՞ր դերասանն է կարողացել այդպես հավաստի կերպավորել հայ մտավորականի մտքերի տեսիլքը...

Շտապեմ նշել. նա մեր տաղանդավոր բանաստեղծ Հովիկ Հովեյանն է, ում բանաստեղծական ժողովածուները ոչ միայն ընթերցում ենք, այլեւ նրա հետ սիրով ընկերություն ենք անում:

Եթե հաճախ օգտագործում ենք, թե այս դերասանը օժտված է պոետի պատկերավոր զգացողությամբ, թե պոետիկ կեցվածք ունի, ապա ինչու չենք կարող ասել, թե այս պոետը արտիստիկ կեցվածք ունի, որ նրա նիստ ու կացը, անգամ նրա հագ ու կապը, նրա քայլքն ու ժեստերը արտիստիկ են, որ նրա մեջ դերասանական վարպետության ահռելի ձիրք է ննջում եւ որ մի օր այն արթնանալու է... Եվ սա հենց այդ դեպքն է:

Հովիկ Հովեյանը ունի ընդգծված արտիստիկ նկարագիր, ընդգծված կեցվածք (իր անբաժան ծխամորճով հանդերձ) եւ նա պարզապես խաղում է ինքն իրեն...Այս առումով միանգամայն եւ համոզիչ է նրա պահվածքը Զոհրապի սենյակում...Դա մե՞ր հարյուրամյա վերքն է, մեր մրմուռը,մեր ցավը...

Եվ սակայն այլ են նրա ապրումները, նրա համր ճիչն ու աղաղակը արդեն Աթաթուրքի սենյակում: Այստեղ ակամայից մտնելով երկխոսության մեջ, Հովեյանի հերոսը ոչ միայն արժանապատիվ դիմակայում է Աթաթուրքի դաժան, սակայն անառարկելի ճշմարտություններին, այլեւ մի պահ այնպես է հուզվում, որ նրա աչքերի մեջ արցունքի ցոլքեր են նշմարվում, հուզվում ենք նաեւ մենք` հանդիսատեսներս...Եվ միթե սա դերասանական արվեստի, կատարյալ ապրումի դրսեւորում չէ...

Եվ այստեղ, այս սենյակում էլ կատարվում է ֆիլմի հիմնական գործողությունը: Այս սենյակը ախտահարված էր, բայց մի պահ թվաց, թե արյան հոտ է գալիս: Գուցե թվաց, բայց այդ հոտը այդպես էլ դուրս չեկավ նրա ռունգերից: Հասկացավ, որ հոտն էլ ունի պատմական հիշողություն: Դեմը դրված մետաղյա սեւ արկղը նույնպես պատմական հիշողություն ունի, որ այնտեղ խնամքով պահպանվել է Աթաթուրքի ձայնը եւ ձեռք է բերել մետաղյա հնչեղություն: Ու այնտեղից լսվում է տղամարդու ձայն «Ես Աթաթուրքն եմ...»:

Եվ ի զարմանս մեր գրողի, ասես նա մասնակիցն է իր մտորումների եւ բարձրաձայնում է բաներ, որոնք զարմացնում են նրան: Աթաթուրքը խոսում է Անդրանիկի մասին. պարզ է, որովհետեւ թուրքերի սարսափն էր նա...

«Դուք նրա նման հերոս չունեիք, չեք էլ ունենա: Նրա մասին ես հիացմունքով եմ խոսել 1934 թվականին, երբ ձեր Խորհրդային Հայաստանում նրա անունը տալն անգամ արգելված էր»:

-Բայց հայոց զարմը չի ամլացել, - փորձում է հակադարձել հայ գրողը «Գիտեմ, հիմա Մոնթե Մելքոնյանի անունը կտաս... Թուրքերը ատում էին նրան եւ գիտես ինչո՞ւ. կռվելը նրա համար պարտք չէր, այլ հպարտություն: Նրա նման հրամանատարները շուտ են զոհվում, ոչ թե մարտի պահին, այլ պատահաբար անհեթեթ մի գնդակից... Խորհուրդ կտամ էլ նախահարձակ չլինես, թե մենք դասական բարբարոսներ ենք»...

-Դուք չեք դադարում մեղքեր գործել նաեւ մեր ժամանակներում,- եւ այնուամենայնիվ մեր գրողը փորձում է հակադարձել: Սակայն մետաղյա ձայնը չի նահանջում. «Քիչ առաջ նկուղի սենյակում նզովում էիք մեզ, մեղադրում Վարուժանին, Զոհրապին, Ռուբեն Սեւակին գազանաբար սպանելու համար: Սակայն ասա ինձ, բարեկամս, ո՞վ սպանեց Չարենցին, Բակունցին, Զաբել Եսայանին...Ժողովուրդների հայ Ստալինն էր մեղավոր, իսկ Պարույր Սեւակին, Մինասին...Ինչպե՞ս կարողացաք այդքան դաժան լինել»...

Եվ ինչպե՞ս պատասխանի մեր հերոսը, երբ զգում է, որ թուրքն ավելի իրազեկված է քան ինքը...

Եվ ինչպես, ինչպես հակադարձի այն ճշմարիտ պնդումին, թե ինչ սոսկալի հետեւանքներ ունեցավ Լենին-Աթաթուրք համագործակցությունը, որ Լենինը ուներ հատուկ նպատակ` հեղափոխության արտահանում որքան հնարավոր է շատ, եւ Հայաստանի շահը նրա համար առ ոչինչ էր... Եվ Հայաստանը կորցրեց իր հողերի մեծագույն մասը...

Եվ այստեղ ուզում եմ նշել ֆիլմի ռեժիսորական աշխատանքի ու հմտության մասին:

Թեեւ հայ կինոյում շատ ռեժիսորների եմ ճանաչում, շատերի հետ էլ աշխատել եմ, սակայն չեմ ճանաչում Էդուարդ Տեր-Սահակյանին:

Դատելով այս ֆիլմով, ուզում եմ ընդգծել. Նա ցուցադրել է փայլուն պրոֆեսիոնալիզմ, ճաշակավոր մասնագետ է: Ուզում եմ խոստովանել. շատ եւ շատ փաստագրական ժապավեններ եմ դիտել, սակայն չեմ հանդիպել Լենինի ճիվաղային այդ կերպարին... Զարմանք, սակայն եւ հիացմունք առաջացավ մեջս, երբ Լենին-Աթաթուրք համագործակցության պատումի տեսարաններում խոշոր պլանով ցուցադրվում է Լենինի իրոք ճիվաղային կերպարանքը...

Ուրախալի է, որ պատմական կինոնյութի հետ աշխատող նման սուր աչք ունեցող ռեժիսոր ունենք:

Թե Ֆելիքս Բախչինյանի, իմ հին բարեկամի, գրողի, հրապարակախոսի, թարգմանչի, վերջապես կարգին մտավորականի մասին ասելիքս շատ է, թե այս ֆիլմի մասին շատ ասելիքներ տողատակերում մնացին, բայց ավարտելով խոսքս ուզում եմ նշել, որ այս ֆիլմը մեզ ներշնչում է մտածել, խորհել ավելի քան հարյուր տարվա պատմական անցքերի մասին, բայց եւ միաժամանակ ներշնչում է լավատեսություն` մեր ապագայի հանդեպ...ներշնչում է, որ այն պայծառ է լինելու...

Եվ ինչպես Սեւակը կասեր` «Փառաբանեմ ներշնչման ցնծուն պահը»...

# Նվիրատվություններ Բեյրութի Վահան Թեքեյան վարժարանին



Օգոստոսի 4-ին Բեյրութի նավահանգստում պատահած աղետալի պայթյունը բազմաթիվ շենքեր ու բնակարաններ ավերելուց բացի մեծամեծ վնասներ հասցրեց նաեւ հայկական կրթական ու կրոնական շատ կառույցների, որոնց շարքում` Բուրջ Համուդ հայաշատ թաղամասի մոտ գտնվող Վահան Թեքեյան վարժարանին, ինչպես նաեւ մայրաքաղաքի գլխավոր հրապարակի մերձակայքում գտնվող բազմահարկ Թեքեյան կենտրոնին, որտեղ գտնվում են ոչ միայն Ռամկավար Ազատական կուսակցության կենտրոնական գրասենյակը, «Մեթր Հրաչյա Սեդրակյան» հանդիսասրահը, այլեւ Շահան Շահնուրի գրադարանը եւ 1937 թ.ից ի վեր լույս տեսնող «Զարթօնք» թերթի խմբագրությունը:

Նյութական վնասները իսկապես ծանր են, կարոտ` արտաքին օգնության: Նամանավանդ դպրոցը, որն իր դռներն էր բացելու առաջիկա հոկտեմբերին...

Թեքեյանականները բազմաթիվ են աշխարհում, հատկապես Մ. Նահանգներում եւ Կանադայում, մեծամասամբ երիտասարդ տարիքում Բեյրութի Թեքեյան կենտրոն ու Վահան Թեքեյան վարժարան հաճախած` այժմ ամերիկահայ ու կանադահայ դարձած հասուն մարդիկ:

Եվ ավելի քան տեղին էր, որ ԹՄՄ ԱՄՆ-ի եւ Կանադայի կենտրոնական վարչությունը կազմակերպեր եւ հունավորեր նրանց երախտագիտական զգացումների արտահայտությունը` նաեւ նվիրատվության ձեւով:

Ընդամենը երեք օրում հանգանակվել է, ինչպես գրում են մեզ Բոստոնից, որտեղ գտնվում է ԹՄՄ կենտրոնական գրասենյակը, 20000 դոլար, որը կրկնապատկել է Ազգային բարերար Նազար Նազարյանը:

Նվիրահավաքը շարունակվում է:

# «Չափորոշիչ»ին դատարկ նժարը



⇨1 Թարգմանաբար ներկայացուած են օտարագիր գրողներ, եւ անտեսուած՝ միեւնոյն արտասահմանին մէջ ապրող արեւմտահայ գրողներ, որոնք ընտրա՛ծ են հայերէն գրել: Իրենք փառք ու պատիւ արհամարհած՝ հայ լեզուի շքեղութիւնը եւ հոգիի ազնուութիւնն ու ողբերգութիւնը փոխանցած են սեփական գիրով եւ արիւնո՛վ՝ տասնամնեակներէ ի վեր, երբեմն կէս դարէն աւելի : Կսկծանքի կծիկներով ապրած են եւ վերապրումի պատսպարաններ արարած: Բազմամշակութային երկիրներու մէջ ապրելով՝ բերած են յաւելեալ լոյս եւ ինքնագիտակցութիւն:

Յարգելի եւ ոչ-յարգելի խմբագրական կազմ,

Շնորհաւորելի է ձեր եռանդը հայրենի երիտասարդ սերունդի ներկայացուցիչներուն տեղ տալու, բայց անոնք ալ քսան տարիէն երիտասարդ պիտի չմնան, ի՞նչ պիտի ընէք: Ծրագրա՞ծ էք տասը-քսան տարին անգամ մը նոր դասագիրք մէջտեղ հանել: Նորարար մտածելակերպը չի բաւեր. պէտք է ըլլալ շինարա՛ր եւ ձգտիլ կատարելային:

Իսկ եթէ այնքան լայնամտութիւն ունիք գնահատելու երիտասարդները, ո՞ր լուսամուտէն փախեր է ձեր լայնախոհութիւնը Սփիւռքի ժամանակակից, արդէն բերք ու վաստակ ամբարած, հռչակ ու յարգանք վայելած գրագէտները չանտեսելու:

Թերեւս կարդացած իսկ չէք՝ հոգեբանական նրբագոյն երանգներ բռնող վիպագիր Զապէլ Եսայեանը. Ատանայի ջարդով փշաքաղող, իր Սիլիհտարի պարտէզները՝ Հայաստան հաստատուելէ ետք վերյիշող գրագէտը, որ մեծագոյն բարիքը ըրաւ ներգաղթելով եւ ֆրանսական գրականութիւն դասաւանդելով Հայաստանի Պետական համալսարանին մէջ: Ու իր վախճանը կնքուեցաւ այն օրը, երբ ամբողջ դասապահ մը նոր բանտարկուած Չարենցի արժեւորումը կատարեց իր ուսանողներուն, գիտնալով հանդերձ, որ Չարենցի անունը արտասանողը ծայրագոյն բռնութեան կ'ենթարկուի: Ինք միա՛յն էր Երկրին մէջ, որ բարձրաձայնեց հանճարեղ Չարենցի կարեւորութիւնը, եւ յաջորդ օրն իսկ այլեւս Եսայեանը մահուան նկուղի մէջ դրուած էր:

Գրական երկնակամարի վրայ բառերու հրախաղութեամբ եւ գաղափարներու մտավառութեամբ փայլատակող եօթը լեզուներու տիրապետած ( եւ օտար գրողներու կողմէ հիացուած) Կոստան Զարեանը, նոյնիսկ Գրողների միութեան մէջ չընդունուեցաւ Հայաստան հաստատուելէ ետք: «Նաւը Լերան Վրայ»ի Հայաստան հրատարակուած օրինակը խիստ գրաքննուած էր. կ'ուզեմ հաւատալ, թէ վէպին Պոսթընի հրատարակութիւնը գործածած էք: Կը յիշատակեմ որպէսզի գիտակցիք, թէ իրենց հայրենասիրութեան համար զոհուած սփիւռքահայ գրողներու նկատմամբ ինչպիսի՛ն է ձեր վերաբերումը:

Սփիւռքի գրողները հոգեկան հայրենիք կերտեցին. մեր կեանքի ովկիանոսը խորաչափեցին:

Յակոբ Օշական երեւոյթ է մեր գրականութեան մէջ. տուաւ հումը, հունը, էութիւնը, ակն ու ծակը, հայութեան անհունը: Իր սրտին ահաբեկ տառապանքը կրնա՞ք հասկնալ, երբ գիտնաք, թէ սրտի կաթուածով մահացաւ իր Տէր Զօր ծրագրուած այցելութենէն քանի մը ժամ առաջ:

Մեր մեծագոյն բանաստեղծներէն՝ Նիկողոս Սարաֆեանէն ալ զրկած էք հայրենի ուսանողը: Կը յիշեմ Ալեքսանդր Թոփչեանի յօդուածը, ուր կ'աւաղէր թէ հայրենի ընթերցողը անտարբեր մնաց Հայաստան հրատարակուած Սարաֆեանի վսեմ քերթողութեան նկատմամբ:

Որբունին, որ որբ չձգեց Փարիզի մենակեացները, ասֆալտները, օտարի հետ կենակցութիւնը: Վազգէն Շուշանեանի բազմաշող սիրոյ հեղեղը: Յակոբ Կարապենցի անզուգական արձակը: Խրախունիի խոհերու եւ պատկերներու խրախճանքը: Ժագ Յակոբեանը, որ իր բառերու զօրքով ոգեզինեց Սփիւռքը: Վիպագրութիւնը բարձրագոյն մակարդակի հասցնող Գրիգոր Պըլտեանը: Բառերը ոսկեթելով հիւսած Աբրահամ Ալիքեանը: Եւ դեռ՝ հոյլը համահայկական երկինքը պտղացնողներու, սուզանաւի նման խորունկ տարածութիւնները չափագրողներու:

Տակաւին՝ Սիմոն Սիմոնեան, Անդրանիկ Ծառուկեան, Մուշեղ Իշխան, Վահէ Օշական, Կարօ Արմէնեան, Սարգիս Վահագն, Մովսէս Պչաքճեան, Պօղոս Գուբելեան, Րաֆֆի Քանթեան, Յակոբ Միքայէլեան, Իգնա Սարըասլան, Յարութիւն Պէրպէրեան, Մարուշ Երամեան եւ յիշարժան այլ անուններ: Առանց անհիմն համեստութեան հարկ է մատնանշել, որ իմ գրչակիցներու կողքին անտեսած էք նաեւ իմ գրական հունձքը: Սեփական արիւնով Սփիւռք երկնող առաքեալներու թանկագին ներկայութիւնը:

Դուք յանդգնեցաք անտեսել արեւմտահայ ժամանակակից գրողները, բացի Քրիստիան Բատիկեանէ, եւ ներառնել օրինակ՝ անգլիագիր բանաստեղծ Փիթըր Պալաքեանը: Բարդո՞յթ՝ օտարները ծափահարած են: Եթէ գոնէ անգլիագիրները թերթատած ըլլայիք՝ Տէյվիտ Խըրտեանին բանաստեղծութիւնը բարձրարժէք է եւ հոգեհարազատ:

Իսկ եթէ դժուար է արեւմտահայերէն կարդալ՝ մտքի սահմանափակում, ինքզինք լիուլի ճանչնալու չկամութիւն եւ այլամերժութիւն կը ցուցաբերէ. չըսելու համար՝ ծուլութիւն: Ինչպէ՞ս կ'ըլլայ որ մենք տասը-տասներկու տարեկան՝ կը կարդայինք ու սրտատրոփ կ'արտասանէինք արեւելահայերէն: Մեր դասագիրքերուն մէջ ներկայ էին եւ ե՛ն հայրենի գրողները (աչքէ անցուցէք գոնէ Յարութիւն Քիւրքճեանի «Հայրենի աղբիւր» դասագիրքերու շարքը): Սփիւռքը չունի իր երիտասարդ գրողներու հատընտիրը, այսուհանդերձ Պէյրութի մէջ հրատարակուած է Հայաստանի երիտասարդ արձակագիրներու հատընտիր : Այո՛, յիսուն տարի առաջ մտածած ենք մեր միւս կէսը՝ Հայաստանի երիտասարդ գրողները առաւելագոյն չափով ծանօթացնել: Իսկ հայրենի գրողներու գործերը ներկայութիւն էին մեր վարժարաններուն մէջ, մեր բեմերուն վրայ, մեր երդիքներուն տակ: Այս բոլորին առընթեր մենք գիտակ էինք մեծ թիւով միջազգային գրողներու գործերուն ու կը համադրէինք, առանց զեղչելու բանակ մը հայ գրողներու շէնշող ներկայութիւնը:

Մեծածաւալ հատոր մը կայ՝ «Արեւելահայ գրականութիւն», գոնէ հինգհարիւր էջ, նախատեսուած երկրորդականի վարժարանի աշակերտութեան համար, պատրաստուած՝ հմուտ բանաստեղծ ու խմբագիր Սիմոն Սիմոնեանի կողմէ: Ո՛չ ուղղագրութիւնը պատնէշ եղաւ, ո՛չ լեզուական տարբերութիւնները, դոյզն դժուարութեան առջեւ կանգ առնելու: Յաղթահարեցինք ու հոգեպէս հարստացանք: Անշուշտ որ ամէն բան ճիշդ չըրինք. բայց ճգնեցանք լաւագոյնին, համապարփակին: Արդարամատոյց մնացինք:

Օտար գրողներու յորդահոս ցանկի գոյութիւնը պիտի չարտօնէ, որ ծաւալի հարց մէջտեղ հանէք: Սփիւռքի դասագիրքերու հեղինակները գիտէին գրականութեան թէ՛ խորութիւնը եւ թէ՛ տարածութիւնը, պատմականը եւ այժմէականը ընդգրկելու ձեւը ուսուցման ծրագրի մէջ վարպետօրէն ներմուծել: Որքան առատ է գանձը, այնքան մեծ է գանձատուփը, որ երկիւղով գրկեցինք:

Բայց հիմա ո՞ւր են, ո՛ւր են Սփիւռքի հայագիտական հիմնարկներու վարիչներու, հայագիտութեան դասախօսներու, գոնէ գրական մամուլի ներկայացուցիչներու, մշակութային միութիւններու, Արեւմտահայերէնի համագումար կազմակերպողներու, յանձնառու մտաւորականներու Հայաստան թէ Սփիւռք՝ բողո՛քը այս խեղկատակութեան դիմաց: Յակոբ Չոլաքեանը եւ Յարութիւն Պէրպէրեանը գրեցին ու գրեցին: Երանի՜ թէ սխալիմ որ միայն այս երկուքն էին: Գիրքի մասին չէ որ կը խօսինք, այլ՝ տարբեր բեւեռներու վրայ ապրող, հայերէն լեզուն ցոլացնող դասագիրքի՛ Հայաստանի կրթարաններուն համար: Հոգեւոր սննդատուութեան՝ նոր սերունդին համար:

Այս դասագիրքերու հեղինակները հովանոց բացեր են, որ արեւը բոլորին չհասնի: Տարակոյս չկայ, որ հովանոցը պիտի գունաթափուի, եւ արեւազուրկ դարձնելնուդ համար ձե՛զ՝ խմբագիրներ եւ խորհրդատուներ, պիտի այպանեն վաղուան յանձնառուները, որովհետեւ զլացաք ամբողջութիւնը ներկայացնել:

Թէ՞ոչ տակաւին կը կարծէք, թէ «կթան կով» ըլլալէ զատ Սփիւռքը օգտակարութիւն չունի: Դարձեալ յուշեմ - մենք թէ՛ ծիծեռնակ ենք, թէ՛ առիւծ. թէ՛ երիվար ենք եւ թէ՛ Քուռկիկ Ջալալի: Նարեկ ենք եւ Օշական:

Ի՞նչ համոզումով կը փորձէք խանդավառութիւն եւ գիտութիւն ջամբել, երբ ազգին կէսը մութին հրած էք:

Ներհակ կամ նմանախոհ՝ ի՛նչ ալ ըլլայ, գրականութիւնը կը ժայթքեցնէ, կը հանգչեցնէ, կը խօսեցնէ, կը հարցադրէ, ընթերցողին հոգին լոյսին կը մօտեցնէ՝ միաժամանակ մութն ալ ցոյց տալով: Նոր սերունդի գիտակցութեան մէջ կը դրոշմէ արմատներն ու Ծառը, որպէսզի նոր ընձիւղումները առողջ եւ հմայիչ ըլլան:

Հակառակ որ առաջին օրէն Հայաստանի պատկան մարմինները, խմբագիրները գրականութիւնս սրտաբաց ընդունեցին, քաջալերեցին, հրատարակեցին. եւ հակառակ այն իրողութեան, որ գոնէ վերջին քսանամեակին գրական մամուլի մէջ ներկայ են Սփիւռքի գրողները. կը գնահատեն զանոնք որոշ խմբագիրներ: Գրականագէտներ ու ընթերցասէրներ ծանօթ են անոնց գործերուն, գիրքերով ալ կը հրատարակուին (ինչպէս Մովսէս Պչաքճեանի եօթհատորեակը), յանկարծ ապիբերան մնացինք այս շռնդալից անպատկառութեան դիմաց: Չկա՜յ հի՛մը հիմնականօրէն - հայ հին գրականութիւնը, նախնեաց մատենագրութիւնը, միջնադարեան գրականութիւնը, լայնահուն ու հոգեվարար: Այս պատմական պահուն, երբ խարիսխ պիտի դրուի՝ արեւմտահա՛յ գրողներն ալ հեռացուած են հայրենի դասագիրքերէն: Աստուա՜ծ իմ, մեր սեփական հայրենիքի՛ն մէջ, մեր դարաւոր օրրանին մէջ, մեր քրտինքով ակօսուած ցորեաններու դաշտին մէջէն աքսորուած են մշակները հին եւ նոր:

Արեւմտահայ գրականութեան անհրաժեշտութեան նկատմամբ այս համայնակուլ անտեսումին դիմաց ես ինքզինքս իրաւո՛ւնք կու տամ՝ Սփիւռքի գրականութիւնը ապրեցուցած, հայրենի գրականութիւնը գնահատած բոլո՜ր մահացած եւ ժամանակակից արեւմտահայերէն գրողներու կողմէ յայտարարելու՝

Այդ դատարկ նժարը՝ իմաստութեան բացակայութիւն մը, հոգիի դատարկութիւն մը ցոյց կու տայ:

Եւ կամ՝ քմահաճ տիկնիկի խաղեր, որուն շարժումները այդ կամակատարներուն կերպարանք տուողները կը ճշդեն:

Երկու պարագային ալ՝ դատարկ նժարին համար ուրի՛շ չափորոշողներ գործի անցնելու են: Դոյզն իմաստութիւնը չկա՞յ խորհրդատուութեան հրաւիրելու արեւմտահայերէնի արգասիքին հմուտ գրականագէտներ:

Հայ գրականութիւնը ձեր սեփականութիւնը չէ՛: Սերունդներ դաստիարակող գրականութեան դասագիրքերու հարցն ու հա՛ցն է սեղանին վրայ:

**Օգոստոս 31, 2020**

**ԱՄՆ**

# Christie´s-ի աճուրդը՝ ի նպաստ Բեյրութի

Բրիտանական հանրահռչակ «Քրիստի՛զ» աճուրդի կենտրոնը, ըստ «Գրացիա» լրատվամիջոցի, օգոստոսի 22-ին հայտարարել է, որ մտադիր է բարեգործական աճուրդ կազմակերպել աջակցելու համար Բեյրութի տուժած արվեստասեր հասարակությանը:

Սարսափազդու պայթյունը օգոստոսի 4-ին հարվածեց ոչ միայն գործարար աշխարհին, այլեւ գեղագիտական ծառայություններ մատուցող կենտրոններին:

«Մենք բոլորս Բեյրութի կողքին ենք», «Արվեստը հոգուս Բեյրութի» կարգախոսների ներքո առցանց եղանակով բարեգործական աճուրդը տեղի կունենա հոկտեմբերի վերջերից մինչեւ նոյեմբերի առաջին կեսը:

«Մեր բոլորի հիշողությունների մեջ ընդմիշտ կմնան ավերածությունների սրտաճմլիկ տեսարանները, իսկ մեր խոհերը կլինեն բոլոր այն ընտանիքների հետ, որոնք շատ բան կորցրեցին: Հույսով ենք մեր նախաձեռնությունը մի փոքր կթեթեւացնի նրանց հոգսերը», նշել է կենտրոնի գործադիր տնօրենի պաշտոնակատար **Գիյոմ Չերուտտին**:

Նախատեսվում է 40-50 ցուցանմուշ աճուրդի հանել, որոնց մեջ կլինեն ժամացույցներ, միջազգային եւ տարածաշրջանային արվեստի գործեր եւ ակնեղեն: Աճուրդից գոյացած գումարը հատկացվելու է վերականգնելու քաղաքի արվեստի եւ մշակութային կենտրոնները, ներառյալ Բեյրութի արդի եւ ժամանակակից արվեստի Սուրսոք թանգարանը:

**Հ.Ծ.**

**Արծվի ԲԱԽՉԻՆՅԱՆ**

# Սուդանից Սիբիր.

## Մի սեւ-սպիտակ լուսանկար

*Հեռավոր 80-ականներին, դպրոցում անգլերենի ֆակուլտատիվ դասերից մեկի ժամանակ մեր զուգահեռ դասարանից Ազատուհի Ուլիկյանը մեզ ցույց տվեց ընտանեկան մի լուսանկար. «Սա պապիկս է Սուդանում»: Սեւ-սպիտակ լուսանկարի մեջտեղում մի տղամարդ էր` շրջապատված կիսամերկ սեւամորթ կանանցով ու տղամարդկանցով... Ա՜յ քեզ բան, ուրեմն մեր այս գորշ սովետական դպրոցի աշակերտներից մեկի պապիկը ժամանակին ապրել է այնքան հեռավոր ու տարաշխարհիկ Աֆրիկայում, լուսանկարվել տեղական ցեղերից մեկի մարդկանց հետ, որոնց կանայք մե՜րկ են շրջել... Այդ լուսանկարն ուժեղ տպավորություն թողեց ինձ վրա, մի քանի տարի անց դրա հիման վրա ստեղծեցի մի փոքր գունանկար... Իսկ շատ տարիներ հետո, ուսումնասիրելով Աֆրիկայում հայկական ներկայության եւ աֆրիկահայ համայնքների պատմությունը, նորից հիշեցի այդ լուսանկարը ու որոշեցի գնալ սուդանահայ Ուլիկյանի հետքերով: Գտա մեր զուգահեռ դասարանցի, այժմ Երեւանի Պոլիտեխնիկական համալսարանի կառավարման համակարգերի ամբիոնի դոցենտ Ազատուհի Ուլիկյանին, որն էլ ինձ ներկայացրեց իր հորեղբորը` Սուդանում ծնված Անդրանիկ Ուլիկյանին: Վերջինս սիրով համաձայնեց պատմել իր ընտանիքի չափազանց ուշագրավ պատմությունը, որը ներկայացնում եմ ստորեւ...*

## Աֆրիկյան տարագրություն

Պոլսահայ Մկրտիչ Ուլիկյանը ծնվել է 1904-ին, Թորոս եւ Հնազանդ Ուլիկյանների ընտանիքում: Ունեցել է երկու եղբայր` Կարպիս, Թագվոր եւ մի քույր` Մաղլեն: Ցեղասպանության ժամանակ հայրը, զավակներին փրկելու համար, տարել է Պոլսի ամերիկյան որբանոց, ցանկապատից անցկացրել է ներս եւ հեռացել` իրեն հույս տալով, որ երեխաներն ապահով ձեռքերում են, իսկ ինքը մեկնել է Եգիպտոս: Այդ որբանոց հաճախ էր այցելում Պոլսո Հայոց պատրիարք Զավեն Տէր-Եղիայանը` ի մխիթարություն հայ մանուկների: Տարիներ անց Մկրտիչ Ուլիկյանն իր թոռանն անվանել է Զավեն` ի պատիվ այդ գթասեր հոգեւորականի...

1920 թվականին 16-ամյա Մկրտիչն իր Թագվոր եղբոր հետ, մանկատանը թողնելով փոքր եղբորն ու քրոջը, տեղափոխվել է հոր մոտ` Եգիպտոս: Պատանեկության տարիներից Մկրտիչը մեծ սեր է տածել ավտոմեքենաների հանդեպ, ուստիեւ Եգիպտոսում ստացել է ավտոմեխանիկի մասնագիտություն: Իմանալով, որ հարեւան երկրում` Սուդանում ավտոգործի մասնագետների մեծ պահանջարկ կա, Մկրտիչը մի քիչ դրամ է հավաքել եւ մենմենակ մեկնել է Սուդանի Էլ-Օբեյդ քաղաքը, որտեղ չի ունեցել ոչ մի ծանոթ: Այս քաղաքում նա ծանոթացել է մի տեղացու հետ, որն էլ նրան հայտնել է, որ Էլ-Օբեյդում մի մեծահարուստ հայ է ապրում` հայտնի Սարգիս աղա անունով ու տարել, ցույց է տվել նրա երկհարկանի տունը: Մի օր Մկրտիչը գնացել, ծեծել է այդ տան դարպասը, արաբ ծառային խնդրել է տանտիրոջը հայտնել, որ մի հայրենակից ուզում է հինգ րոպեով զրուցել իր հետ: Ծառան շուտով Մկրտչին հայտնել է, որ տանտերն իրեն ներս է հրավիրում: Սպասել է տաս րոպե, իրեն սառը լիմոնադ են հյուրասիրել, մինչեւ որ վերեւի հարկի սանդուղքներից իջել է մի խոշորամարմին բեղավոր մարդ` տնական խալաթը հագին: Սարգիս աղան անչափ ուրախացել է` հանդիպելով երիտասարդ հայրենակցի, ուշադիր նայել է Մկրտչի աչքերի մեջ ու միանգամից ըմբռնել նրա հոգին: «Ինչո՞վ կրնամ օգտակար ըլլալ, տղա՛ս»,- հարցրել է Սարգիս աղան: Մկրտիչը համարձակվել է ասել, որ ցանկություն ունի բեռնատար մեքենաների գործ սկսել, սակայն բավականաչափ դրամ չունի մեքենա գնելու համար: Հինգ րոպե անց Սարգիս աղան Մկրտչին է հանձնել պակասող գումարը: Երիտասարդը սպասել է, որ պիտի նաեւ ստացական ստանա: «Տղա՛ս,- ասել է Սարգիս աղան,- ես գիտեմ` ինչու չես երթար, եթէ դուն ազնիւ մէկը չըլլայիր` ես քեզի դրամ չէի տար: Այս դրամովդ գնա ուզածդ գնէ՛, վայելէ՛, երբ որ այդ դրամի կարիքը չունենաս` այն ատեն կը վերադարձնես պարտքդ»...

Այդպիսով, հայ հայրենակցի օժանդակության շնորհիվ սկսվել է Մկրտիչ Ուլիկյանի բիզնեսը: Մեկ բեռնատարը դարձել է երկու, երկուսը` երեք, չորս... եւ Աֆրիկայի խորքերում Մկրտիչը վարել է սեփական գործը` իրականացնելով մարդկանց եւ բեռների փոխադրումներ Սուդանի մի բնակավայրից մյուսը: Շուտով բախտը ժպտացել է նաեւ անձնական կյանքում: Էլ-Օբեյդում նա ծանոթացել է Կիրիակո Հերմես անուն-ազգանունով մի գործարարի հետ, որի կինը հայուհի Աղավնին էր: Որոշ ժամանակ անց Խարթումից մորաքրոջը տեսության է եկել Աղավնու քրոջ դուստրը` Ազատուհի Մաթոսյանը: Նա ծնունդով Անկարայի հայ ունեւոր ընտանիքից էր. հայրը` Մինասը, եղել է Անդրանիկ զորավարի զինվորը, այնուհետեւ ընտանիքով տարագրվել են, հաստատվել են Խարթումում, որտեղ Մինասն ունեցել է մի քանի խանութ: Հերմես Կիրիակոն Ազատուհուն ներկայացրել է Մկրտչին, երիտասարդները հավանել են միմյանց, Եգիպտոսից եկել են Մկրտչի ծնողները, եւ նրանք ամուսնացել են: 1941-ին ծնվել է նրանց առաջին որդին` Անդրանիկը, որին հաջորդել են եւս երեքը, ծնված Սուդանում, իսկ եւս երկուսին վիճակված էր ծնվել Խորհրդային Միությունում: Բոլոր զավակներին Մկրտիչը տվել է հայկական անուններ, բացի Մաղլեն դստերից, որին անվանել է ի հիշատակ Պոլսում մնացած վաղամեռիկ քրոջ... Ուլիկյանները խոր հավատացյալ մարդիկ էին, որոնք հայկական եւ քրիստոնեական դաստիարակությամբ են մեծացրել զավակներին: Մկրտիչ Ուլիկյանը բաժանորդագրվել է Կահիրեի «Արեւ» օրաթերթին: Էլ-Օբեյդում հայկական մանկապարտեզ եւ դպրոց չի եղել, եւ ընտանիքում հայրը խստորեն պատվիրել է խոսել միմիայն հայերեն...

Մկրտիչը գրանցել է բեռնափոխադրական գրասենյակ եւ իրեն պատկանող չորս բեռնատարներով ապրանքափոխադրումներ իրականացրել ողջ Սուդանով մեկ, ինչը նրան ապահովել է կայուն եկամուտ: Նա ճանաչել է ողջ Սուդանն ու նրա ժողովուրդներին` արաբներին, հաբեշներին, ղպտիներին, տեղաբնիկ սեւամորթներին: Մի անգամ բեռնատարի թափքում տեղափոխել է տեղացի մի հոգեւորականի` իր քառասուն կանանցով: Իսկ մի անգամ հեռավոր մի գյուղով անցնելիս բեռնատարը շրջապատել է սեւամորթ մի ցեղ, Մկրտչին հայտնել են, որ իրենց ցեղապետը հիվանդ է եւ սպառնացել են բաց չթողնել, մինչեւ որ չօգնեն հիվանդին: Բարեբախտաբար, Մկրտչի մոտ ցավազրկող դեղ է եղել, որով նա կարողացել է թեթեւացնել հիվանդ ցեղապետի վիճակը: Այդ դեպքից հիշատակ է մնացել սույն հոդվածի սկզբում հիշված լուսանկարը, որտեղ Մկրտիչ Ուլիկյանը կանգնած է հիվանդ ցեղապետի դիմաց` շրջապատված գյուղի կիսամերկ բնակիչներով... Դա առանձնահատուկ պատիվ էր, որն արժանացրել էին Մկրտչին, քանի որ այդ ցեղի օրենքների համաձայն, ոչ ոք իրավունք չուներ գտնվել ցեղապետի գլխավերեւում:

Ազատ ժամանակները սուդանաբնակ հայերն անցկացնում էին միասին, հաճախ 25-30 հոգով մեկնում էին բնության գիրկ` զբոսախնջույքի, որի ժամանակ Մկրտիչը պարտադիր մի տակառ գարեջուր էր վերցնում: Նա մեքենայում միշտ պարտադիր ուներ նաեւ երկու հրացան, մեկ ատրճանակ էլ` գրպանում, ճանապարհներին առկա վտանգներից պաշտպանվելու համար:

Հայությունը Սուդանում քիչ է եղել, մոտ 800 հոգի, նրանց թիվը տարեցտարի պակասել է: Մեծ մասամբ մեկնել են Եգիպտոս, որտեղից էլ` տարբեր երկրներ...

## Հայրենիքն է կանչում

Երկրորդ աշխարհամարտից հետո, երբ սկսվել է աշխարհացրիվ հայերի հայրենադարձությունը Խորհրդային Հայաստան, Մկրտիչ Ուլիկյանը նույնպես որոշել է միանալ քարավաններին: Հայաստանի ազգային արխիվում պահվում է 1946 թվականի մարտի 2-ին Մկրտիչ Ուլիկյանի գրած նամակը` ուղղված Խորհրդային Հայաստանի Ժողովրդական Կոմիսարների խորհրդին կից Ներգաղթի եւ տեղավորման կոմիտեի նախագահին: Ստորեւ ներկայացնում ենք այդ նամակը` անփոփոխ թողնելով ուղղագրությունը` կատարելով միայն կետադրական շտկումներ.

«Յարգելի նախագահ
*Տիար Բաբգէն Աստուածատրեան*
*ի Երեւան*
*Հայաստան*

*Անբացատրելի ուրախութեամբ իմացայ րատիօէն եւ կարդացի Արեւ օրաթերթէն, թէ Ռուս ազնիւ եւ վեհանձն Ազգը կարտօնէ այն ամէն Հայու, որոնք կը փափաքին ներգաղթել ի Հայաստան:*



**Երիտասարդ Մկրտիչ Ուլիկյանը**

*Ըլլալով Հայ Ազգի զաւակ` կապրիմ 25 տարիէ ի վեր Աֆրիգայի խորերը: Ըրած եմ իմ ամէն ջանքս, որպէսզի ընտանիքիս անդամները պահեն մայրենի լեզունիս եւ Հայութեան հոգին, սակայն Հայ դպրոցի եւ եկեղեցիի չգոյութենէն կը ցաւիմ` ըսելու, որ շատ քիչ Հայերէն կը խօսին եւ բնականաբար ուսում չունին:*

*Սիրտս շատ ցաւած էր զաւակներուս ապագային մասին. առանց մայրենի ուսումի, առանց եկեղեցիի, եւ շրջապատուած աննպաստ պայմաններու ապագան կորստեան պիտի մատնէ զանոնք (ինչպէս շատերը, աչքովս տեսնում եմ, գտնուած տեղս կորուսած են Հայութիւնէն): Երբ ներգաղթի հրամանի լուրը առի, շուտով նամակ մը գրեցի Եգիպտոսի Ս. Առաջնորդին եւ Որուն Սիրալիր Գրութիւնը կը ղրկեմ ձեր Վսէմութեան, լի յոյսով, թէ նկատի պիտի առնէք մեզ` ըլլալով կորստեան վտանգին մէջ: Կը փափաքենք Հայաստանի մէջ ապրիլ Հայ մնալու համար: Պատրաստ եմ ընտանիքիս անդամներուն ծախսը վճարելու մինչեւ Հայաստան: Բնականաբար, մեզի նախապատուութիւն կուտաք առջի ներգաղթողներէն ըլլալու` ըլլալով հոգւով սովեալ:*

*Ձերդ*
*Վսեմութեան խոնարհ*
*որդի*
*Մկրտիչ Ուլիկեան*
*2-3-1946*
*Magarditsh Ouliguian*
*P.O.Box 73*
*El-Obeid*
*Anglo-Egyptien Soudan»:*

Ստանալով արտոնություն` միանալու Եգիպտոսից հայրենադարձվողների քարավանին, Ուլիկյանը վաճառել է իր տունը, չորս բեռնատարները եւ թողած բարեկեցիկ կյանքը, իրենց սուդանցի ծառաներին` ընտանիքով ճանապարհվել է Եգիպտոս: Այստեղ Հայաստան տանելու համար նա գնել է չորս նոր «Ֆորդ» բեռնատար ավտոմեքենա եւ ամեն մեկում տեղավորել է տարբեր ապրանքներով սնդուկներ` սնունդ, հագուստ, օճառ եւ մեքենայի պահեստամասեր: Ալեքսանդրիայում այս մեքենաները հանձնել են նավահանգիստ` նավը բարձելու համար: Երեք այլ սուդանահայ ընտանիքներ` Նալչաջյանները, Ֆաբրիկատորյանները եւ Սեմերջյանները, նույնպես այնտեղ էին իրենց մեքենաներով: Մկրտիչը Կահիրեում հանդիպել է իր ծանոթ մի ունեւոր արաբ գործարարի, որն իմանալով Հայաստան մեկնելու վերջինիս մտադրության մասին, խորհուրդ է տվել չգնալ պատերազմից նոր ելած աղքատ մի երկիր: Նա Մկրտչին առաջարկել է վերադառնալ Սուդան եւ խոստացել իրեն հանձնել բեռնափոխադրումների ավելի ընդլայնված գործ` իր հետ կիսելով շահույթը: Մկրտիչը հանդիպել է նաեւ իր ֆրանսիացի, բելգիացի եւ դանիացի ընկերներին, որոնք էլ նրան առաջարկել են միասին Եվրոպա տեղափոխվել ու համատեղ աշխատել, սակայն Ուլիկյանը մնացել է անդրդվելի` չհամաձայնելով ոչ մեկի առաջարկին...

Եգիպտոսում հայտարարված կարանտինի պատճառով ներգաղթել ցանկացողներին չի թույլատրվել երկրից դուրս գալ: Ուլիկյանները մյուսների հետ ստիպված մեկ տարի մնացել են Կահիրեում, որտեղ Անդրանիկ որդին հաճախել է տեղի Գալուստյան վարժարանի մանկապարտեզը:

Հասել է մեկնումի օրը: Հայրենադարձվողները բարձրացել են խորհրդային նավը, որը պատերազմի ժամանակ առգրավված է եղել Գերմանիայից եւ վերանվանված «Պոբեդա»: Ի դեպ, նույն նավով էր ճամփորդում նաեւ ապագա հռչակավոր երգչուհի Գոհար Գասպարյանը: Մեքենաների տերերին հայտնել են, որ նավում տեղ չլինելու պատճառով իրենց ավտոմեքենաները գալու են հաջորդ` ռումինական «Տրանսիլվանիա» նավով: Այդ մեքենաները մինչ օրս տեղ չեն հասել...

## Երազների խորտակումը

Բաթում նավահանգստից մեկ կիլոմետրի վրա «Պոբեդա» նավը կանգ է առել, եւ ուղեւորներին հրամայվել է իրենց մոտ եղած ուտելիքը թափել ծովը` պատճառաբանելով, որ Խորհուրդների երկրում ամեն ինչ կա, որ արգելված է ուտելիքով մտնել նավահանգիստ: Ժողովուրդը սկսել է ջուրը նետել մոտը եղած սնունդը եւ մի քանի րոպե անց զարմանքով նկատել, որ ափից բազմաթիվ մարդիկ են լողում ու վերցնում են այն ամենը, ինչը չի հասցրել ընկղմվել: Դա տեսնելով` Մկրտչի կնոջ եղբայրն իրենց մոտ եղած չորս կտոր բաստուրման թաքցրել է բրդե ծածկոցների մեջ... Մարդիկ հեռադիտակներով սկսել են դիտել Բաթումի նավահանգիստն ու սարսափով տեսել, որ մի կին կարաբինը ձեռքին պահակ է կանգնած պահակատան մոտ, իսկ մեկ ուրիշը ձեռնասայլակով ածուխ է տեղափոխում: Եգիպտահայերը, որ մեծ մասամբ ունեւոր էին, հասկացել են, որ ծուղակն են ընկել...

Նավահանգստում ժողովրդին լցրել են բարաքները, որպես կերակուր բերել են թթու բորշ եւ մի սեւ ուտելիք, որպիսին եգիպտահայերը երբեւէ չէին տեսել, ուստիեւ շոկոլադի տորթի տեղ են դրել, մինչդեռ եղածն անորակ սեւ հաց էր, որը քամելիս աղաջուր է թափվել...

Հասնելով Երեւան` Ուլիկյաններին տեղավորել են Երրորդ մաս թաղամասում գտնվող եռահարկ մի շենքում, որը նոր էին կառուցել գերմանացի ռազմագերիները: Մկրտիչն աշխատանքի է անցել բեռնա-

# Մկրտիչ Ուլիկյանի ոդիսականը


*Մարդո Փոքրաչյանը*

տարների հինգերորդ նորոգակայանում: Սկզբնական շրջանում նա աշխատանքի է գնացել իր անգլիական կոստյումով ու փողկապով, մինչեւ որ իրեն հայտնել են, որ դա խորհրդային բանվորին վայել հագուստ չէ՝ հրամայելով. «էդ պարանը վզից հանել»...

Խորհրդային պետությունը, հարյուր հազար հայրենադարձներին իր երկիր բերելու գնով ողջ աշխարհի աչքին ամրապնդելով պատերազմում հաղթած հզոր տերության իր իմիջը, այնուհետեւ ձեռնամուխ է եղել նրանցից ազատվելու գործին՝ աքսորելով նրանց սիբիրներն ու ալթայները... 1949 թվականի հունիսի 12-ին գիշերվա ժամը 2-ին ծեծել են նաեւ Ուլիկյանների բնակարանի դուռը: Ներս է մտել մի հայ կապիտան՝ կարաբինավոր երկու ռուս զինվորների հետ եւ հրամայել է իրերն ամիջապես հավաքել ու տնից դուրս գալ: Տեսնելով չորս մանկահասակ երեխաների, մեկին էլ՝ բարուրում՝ կապիտանը լցվել է խղճահարությամբ: «Ինձ հրամայված է ձեզ տանել,- ասել է նա:- Ինձ չանիծես, մե՛ծ եղբայր, եթե քեզ չտանեմ՝ ինձ էլ ձեզ հետ կտանեն: Ես կարող եմ ձեզ հիմա միայն մի լավություն անել. ձեր գույքը հավաքելու համար ինձ տրված է տաս րոպե, բայց ես ձեզ տալիս եմ կես ժամ: Ինչ արժեքավոր բան ունես՝ հետդ վերցրու, հատկապես տաք շորեր»: Մկրտիչը վերցրել է կնոջ զարդերը, որոնք հետագայում պիտի օգնության հասնեին իրենց նեղ օրերին, ուստիեւ ողջ կյանքում նա երախտագիտությամբ է հիշել այդ կապիտանին: Իրարանցման մեջ նրանք տանն են մոռացել բարուրով նորածնին ու ստիպված են եղել վերադառնալ նրա ետեւից... Ուլուխանլու գյուղում Ուլիկյաններին հազարավոր այլ հայրենադարձների հետ լցրել են ապրանքատար գնացքի վագոնները, եւ տասնութ օր տեւող տաժանելի ճամփորդությունից հետո հայրենիքի կանչին անսած հայրենադարձները ճակատագրի դաժան խաղի արդյունքում հայտնվել են վայրի ու չարաղետ Սիբիրում, ստալինյան աքսորավայրերում: Նրանց միակ մեղքը հայրենիքում ապրելու ու նրան ծառայելու ցանկությունն էր, հանուն որի թողել էին իրենց հանգիստ կյանքը եւ դարձել խորհրդային պրոպագանդայի նենգ խաղի զոհերը...

## Կյանքը տայգայում

Այսպիսով, Հայաստանը դեռ կարգին չճանաչած Ուլիկյանների համար Սուդանը վեց տարով փոխարինվել է Ալթայի երկրամասի Զալեսովոյի շրջանով: Քառասունհինգ աքսորված հայ ընտանիք կար այնտեղ, որոնցից քսանհինգը հայրենադարձներ էին: Մկրտչի ընտանիքին տարել են Զալեսովոյից 32 կիլոմետր հեռավորության վրա մի տեղ, տայգայի խորքում, որտեղ կային ընդամենը երեք որսորդական խրճիթ ու մի փոքրիկ կրպակ: Տվել են մի վրան, հրամայել են ծառերը կտրել ու տուն կառուցել, քանի որ սեպտեմբերից արդեն ձմեռ է լինելու: Մկրտիչը տեղի այլ աքսորականներին վարձատրելով՝ նրանց հետ մի փայտե խրճիթ է կառուցել: Աֆրիկայից բերած բրդե ծածկոցները թույլ են տվել ընտանիքին դիմակայել 35-40 աստիճան սառնամանիքին... Բայց անգամ սիբիրյան պայմաններում Ուլիկյան ամուսինները կարողացել են պահպանել իրենց քրիստոնեական նկարագիրը, զավակներին սովորեցրել են ճաշից առաջ պարտադիր խաչակնքել, ինչը հազվագյուտ էր խորհրդային իրականության համար...

Իսկ թե ինչ մեղադրանքով էր Մկրտիչ Ուլիկյանն աքսորվել՝ իմացել են մեկ տարի անց: 1950 թվականին մի գիշեր, ժամը 2-ին թակել են նրա՝ հիմա արդեն սիբիրյան խրճիթի դուռը եւ Մկրտչին տարել են: Երկու ժամ անց նրան արյունլվա վիճակում բերել են տուն: Աքսորի համար հիմք ունենալու նպատակով Մկրտչին ստիպել էին ստորագրել, որ իբր դաշնակցական է եղել, սակայն նա հրաժարվել է ստորագրել: Նույն պատմությունը կրկնվել է նաեւ 1951 թվականին. դարձյալ ծեծուջարդ, եւ դարձյալ հրաժարվել է ստորագրել: Ընդ որում, դա տեղի է ունեցել Հայաստանից ստացված հրամանի համաձայն...

Մկրտիչն աշխատանքի է անցել տեղի էլեկտրակայանում, իսկ կինը՝ Ազատուհին, փափուկ կյանքով ապրած այդ արիստոկրատ, կրթված կինը, ութամյա Անդրանիկ որդու հետ սղոցել է խրճիթի մերձակա տարածքի կոճղերը՝ կարտոֆիլ ցանելու նպատակով: Սնունդ հայթայթելու հարցը շատ դժվար էր: Շուտով Մկրտիչն իմացել է, որ մոտակա Օբուխովո որսորդական գյուղի բնակիչները նապաստակի միս են մթերում: Ավագ որդու հետ նա անտառի միջով, արհամարհելով ցուրտն ու վայրի գազանների վախը՝ հասել է այդ գյուղը, եւ կնոջ ոսկե ապարանջանները տալով՝ գնել են սառեցրած նապաստակներ: Այդպիսով, սիբիրյան դաժան պայմաններում կարտոֆիլն ու նապաստակի միսը փրկություն են եղել Ուլիկյանների համար... Իսկ բազմանդամ ընտանիքը համալրվել էր եւս մեկով. Սիբիրում լույս աշխարհ էր եկել Ուլիկյանների եւս մեկ դուստրը, որին անվանել էին Մկրտչի մոր անունով՝ Հնազանդ...


*Մկրտիչ Ուլիկյանը սուդանցի տեղաբնիկների միջավայրում*


*«Ազատուհու պատիկը Սուդանում» (գեղանկարը՝ Արծվի Բախչինյանի, 1987)*

## Անակնկալ հանդիպում Բառնաուլում

Ստալինի մահից երկու տարի հետո, 1955 թվականին, Մկրտիչը նամակ է գրել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Կլիմենտ Վորոշիլովին՝ նշելով, որ իրենք, լինելով Աֆրիկայից, սովոր չեն ցուրտ կլիմային եւ խնդրել են թույլատրել վերադառնալ Հայաստան: Պատասխանը չի ուշացել, տաս օրում եկել է նամակ՝ անձամբ Վորոշիլովի ստորագրությամբ, սակայն գրված է եղել, որ իրենք կարող են տեղափոխվել Միջին Ասիայի ցանկացած հանրապետություն, բայց ո՛չ Կովկաս: Մկրտիչը շուտով ստացել է աքսորավայրը թողնելու պաշտոնական գրությունը: Ուլիկյանները գնացքով մեկնել են Ալթայի երկրամասի գլխավոր քաղաքը՝ Բառնաուլ, որտեղից էլ գնացքով պիտի մեկնեին Միջին Ասիա: Սակայն քանի որ մեկնել ցանկացողների թիվը մեծ է եղել, նրանք երեք օր չեն կարողացել վավերացնել իրենց տոմսերը: Այստեղ օգնության է հասել մի հայրենադարձ աքսորյալ՝ Մարդո Փոքրաչյանը, որին Մկրտիչը պատահաբար տեսել է երկաթուղային կայարանում: Մարդոն եղել է Միջին Արեւելքի բռնցքամարտի ախոյան, բայց Մկրտիչն անձամբ ծանոթ չի եղել հետը, ուստիեւ ցանկանալով գրավել նրա ուշադրությունը՝ որդուն բարձրաձայն ասել է. «Տղա՛ս, վազէ՛ քիչ մը եռացած ջո՛ւր բեր»: Այս խոսքը լսելով՝ Մարդոն մոտեցել է Մկրտչին ու ասել. «Եղբա՛յր, դուն հայ ես... հոնկէ եկածներէ՞ն ես»: «Այո, Եգիպտոսէն եմ»: «Մականունդ ի՞նչ է»: «Ուլիկեան»: «Դուն Ուլիկին աղբա՞րն ես»,- ասել է Մարդոն եւ գրկախառնվել է Մկրտչի հետ. պարզվել է, որ նա ճանաչել է Մկրտչի եղբայրներից մեկին, որին մտերմաբար Ուլիկ է անվանել...

Իմանալով այն անելանելի վիճակի մասին, որի մեջ հայտնվել է Մկրտչի ընտանիքը, Մարդոն, այդ երկու մետրանոց հաղթանդամ, խիտ մազածածկույթով տղամարդը, որը չորս տարի բանտ էր նստել՝ իր մազոտությունը ծաղրող հինգ ռուսներին ծեծելու համար եւ որից բոլորը վախենում էին, վերցրել է գնացքի տոմսերը: Նա քացով դուռը բացելով՝ մտել է կայարանի պետի սենյակը եւ իր կոտրած ռուսերենով պահանջել է Ուլիկյանների տոմսերը վավերացնելու գրավոր թույլտվություն: Այնուհետեւ մոտեցել է դրամարկղին եւ ստիպել է վավերացնել տոմսերը՝ բողոքող ամբոխին ասելով, որ դա անում է վեց երեխաների տեր ընտանիքի համար...

Հերթական գնացքը ժամանել է միայն հաջորդ օրը: Մարդոն նորից եկել է կայարան, իր ընկեր, նույնպես աքսորական հայրենադարձ Գեւորգի հետ, որին, ինչպես պարզվել է, Մկրտիչը նույնպես ճանաչելիս է եղել: Մարդոն մոտեցել է գնացքի դռանը եւ աղաղակող ամբոխին նորից իր կիսատ-պռատ ռուսերենով ասել է, որ առաջինը գնացք պիտի մտնի վեց երեխաների տեր ընտանիքը: Պորտֆելով եւ շլյապայով մի մարդ մոտեցել է ու հոխորտացել Մարդոյի վրա: Նախկին մարզիկը մի շառաչուն ապտակ է հասցրել մարդուն, որը մեջքի վրա ընկել է. դրանից հետո միայն ամբոխը սսկվել է: Առաջինը գնացք է մտել Գեւորգը ու տեղ զբաղեցրել Ուլիկյանների համար: Մեկնելուց առաջ Մկրտիչը հարցրել է Մարդոյին, թե նա չի՞ պատրաստվում վերադառնալ Հայաստան: «Ես հոս ռուսներու հերն անիծելով ապրուստս գտած եմ, երթամ հոն, նորէ՞ն ինծի բռնեն, աքսորեն: Ո՛չ, չեմ երթար»,- ասել է Մարդոն: Նա հետագայում այցելել է Հայաստան, սակայն կյանքի մեծ մասն ապրել եւ վախճանվել է Բառնաուլում՝ իր անունը թողնելով որպես Ալթայի երկրամասում բռնցքամարտի հիմնադիրներից մեկը...

## Հիմա էլ՝ Ուզբեկստան

Ուլիկյանները հասել են Ուզբեկստան եւ հաստատվել Ֆերգանա քաղաքում: Մկրտիչը որպես վարորդ աշխատանքի է անցել քաղաքից 48 կիլոմետր հեռու գտնվող Տոշլոկի շրջանի մի ավտոպարկում: Երբ նա առաջին անգամ մեկնել է այնտեղ, որդին՝ Անդրանիկը, միացել է հորը՝ ռուսերեն զրույցը թարգմանելու: Վեց լեզվով վարժ խոսող Մկրտիչը չի ցանկացել լավ ռուսերեն սովորել, իսկ Սիբիրում դպրոց գնացած Անդրանիկն այդպես էլ չի սովորել հայերեն գրել-կարդալ ու շրջապատին մշտապես զարմացրել է ռուսերենի իր անթերի առոգանությամբ: Կարող ենք պատկերացնել զինծառայության տարիներին ռուս սպայի ծայրահեղ ապշանքը, երբ շարքային Անդրանիկ Ուլիկյանի անթերի ռուսերենը գովելուց հետո նրա անձնագրում որպես ծննդավայր տեսել է «Սուդան, Աֆրիկա» նշումը...

Մեկ տարի Ուլիկյանները բնակվել են Ուզբեկստանում. այդ ընթացքում Մկրտիչը Տոշլոկի շրջանում բեռնատարով բամբակի հումք եւ սերմեր է մատակարարել բամբակ մշակող գործարաններին: Ուզբեկստանում ապրած տարիների դեպքերից նա հատկապես հիշել է հետեւյալ զվարճալի դիպվածը: Սեւամորթների հետ իր լուսանկարը Մկրտիչը բազմացրել էր ու մի օրինակ պահում էր իր վարորդական գրքույկում՝ հեռատեսորեն հասկանալով, որ այն կարող է օգտակար լինել ավտոտեսուչների կամայականություններին հանդիպելիս: Եվ մի անգամ նրա մեքենան կանգնեցրել է ավագ ավտոտեսուչ կապիտանը եւ վարորդական իրավունքի փոխարեն սկսել է ուսումնասիրել աֆրիկյան լուսանկարն ու հարցուփորձ է արել դրա, հատկապես մերկ կանանց մասին: Ի վերջո նա հրաժարվել է վերադարձնել լուսանկարը, իսկ փոխարենը հետագայում այլեւս չի անհանգստացրել Մկրտչին...

1956 թվականին խորհրդային նոր ղեկավար Խրուշչովն ի լուր աշխարհի դատապարտել է Ստալինի անհատի պաշտամունքը: Ուլիկյանները վերջապես ստացել են իշխանությունների պաշտոնական հավաստագիրը, ըստ որի նրանք համարվել են անհիմն բռնադատվածներ եւ ստացել են Հայաստան վերադառնալու իրավունք... Ու թեեւ կյանքը Ֆերգանայում հարմարավետ էր, սնունդն՝ առատ, Մկրտիչ Ուլիկյանը կյանքում երկրորդ անգամ որոշել է ընտանիքով մեկնել Հայաստան...

## «Ոնց որ բոլորը, էնպես էլ՝ մենք...»

Հաղթահարելով նոր տեսակի դժվարություններ՝ Մկրտչի զավակներն աշխատանքի եւ ընտանիքի տեր են դարձել Հայաստանում: Մկրտիչը շարունակել է աշխատել որպես մեքենավար: Նա երբեք չի զղջացել հայրենադարձության համար, չի փորձել հեռանալ Խորհրդային Միությունից, չի դժգոհել կյանքում իրենց հասած փորձություններից, իսկ երբ որդին՝ Անդրանիկը, երբեմն բողոքել է կյանքի դժվարություններից, նա միշտ ասել է. «Ոչինչ, տղա՛ս, ոնց որ բոլորը, էնպես էլ՝ մենք»: Միայն մահից երկու օր առաջ Մկրտիչը, թերեւս վերագնահատելով անցած կյանքը, հարկ է համարել որդուց ներողություն խնդրել՝ իրենց Խորհրդային Միություն բերելու համար... «Ոչինչ, հայրի՛կ, ոնց որ բոլորը, էնպես էլ՝ մենք»,- պատասխանել է Անդրանիկը՝ հորը վերադարձնելով նրա իսկ խոսքերը...

Մկրտիչ Ուլիկյանն ապրել է 93 տարի՝ մահանալով 1997 թվականին, իսկ կինը՝ Ազատուհին, ամուսնուն հետեւել է երեք տարի անց՝ կյանքից հեռանալով 82 տարեկանում...

Դեռեւս Աֆրիկայի խորքերում ապրելու տարիներին Մկրտիչ Ուլիկյանը մտահոգություն է հայտնել հայության համար աննպաստ պայմաններում մեծացող զավակների ապագայի վերաբերյալ: Այսօր նրա սերունդները շարունակում են մեծ մասամբ բնակվել Հայաստանում՝ յուրաքանչյուրն իր նպաստը բերելով իր ընտրած բնագավառում: Այսպիսով, թեկուզեւ որոշակի փորձությունների գնով, չարքաշ եւ հայրենասեր Մկրտիչ Ուլիկյանի հայապահպանության ջանքերը, ինչպես տեսնում ենք, ապարդյուն չեն անցել...

# Սեւրի պայմանագիրը որպես պահանջատիրության իրավաքաղաքական հիմքերից մեկը

## *Հարցազրույց` պրոֆեսոր Արմեն Մարուքյանի հետ*



*2020 թ. օգոստոսի 10-ին լրացավ Սեւրի պայմանագրի ստորագրման 100-ամյակը: Հայ ժողովրդի համար այդ կարեւորագույն փաստաթղթի 100-ամյա հոբելյանին նվիրված ՀՀ ԳԱԱ կլոր դահլիճում տեղի ունեցավ գիտաժողով: Ակադեմիկոս* ***Յու. Սուվարյանի*** *բացման խոսքից հետո հետաքրքրական, տարողունակ, նոր մոտեցումներով ու մեկնաբանություններով հարուստ զեկուցումներով հանդես եկան ակադեմիկոսներ* ***Աշոտ Մելքոնյանը, Ռուբեն Սաֆրաստյանը****, պատմական գիտությունների դոկտորներ* ***Կարեն Խաչատրյանը, Արմեն Մարուքյանը*** *եւ* ***Լեւոն Հովսեփյանը****:*

Կոնֆերանսն հետաքրքրական էր եւ բովանդակալից նաեւ այն առումով, որ զեկուցողներից յուրաքանչյուրը դաշնագիրը քննարկում ու լուսաբանում էր իր տեսանկյունից: Այսպես` Ա. Մելքոնյանը ներկայացրեց Սեւրի դաշնագրի վերաբերյալ ժամանակի ընթացքում ձեւավորված հիմնական տեսակետները, շատ վիճելի հարցերի պատասխանեց նորովի եւ միանգամայն հիմնավորված: Ռ. Սաֆրաստյանը փաստական հարուստ հենքով ներկայացրեց թուրքական կեղծ, հակագիտական «տեսակետները» եւ ժխտողական կեցվածքը դաշնագրի եւ ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնի իրավարար վճռի վերաբերյալ: Պրոֆեսոր Կ. Խաչատրյանը պարզաբանեց դաշնագրի նկատմամբ ռուսական կողմի մոտեցումները: Ա. Մարուքյանը` դաշնագիրը դիտարկեց որպես հայոց պահանջատիրության իրավաքաղաքական հիմքերից մեկը: Լ. Հովսեփյանն էլ մերօրյա թուրքական պաշտոնական վերաբերմունքն ու Թուրքիայում ցայսօր առկա սեւրոֆոբիայի գոյության իրողությունը:

«Ազգ» թերթը որպես ազգաշահ դրսեւորումների ավանդական պաշտպան եւ ջատագով, չէր կարող անտարբեր մնալ եւ չարձագանքել մի քանի առումներով առանձնացող այդ գիտաժողովին: Առավել եւս, որ առաջին անգամ մեզանում ի դեմս վարչապետի այդ առիթով ուղերձի, դաշնագրին ցուցաբերվեց նաեւ պետական վերաբերմունք: Խմբագրությունս դիմել է զեկուցողներին եւ ստանալով նրանց սիրահոժար աջակցությունը` հարցազրույցի եւ այլ ձեւաչափերով հակիրճ կներկայացնի զեկուցումների հիմնական բովանդակությունները: Այս անգամ մեր հյուրն է պգդ, պրոֆեսոր Արմեն Մարուքյանը:

**- Պ. Մարուքյան, Սեւրի դաշնագրի մասին մոտեցումներում նախկինում եւ մեր օրերում ի՞նչ տարբերություններ կան:**

- Հայ պատմագիտական միտքը տասնամյակներ շարունակ Սեւրի պայմանագիրը գերազանցապես քննարկել է Հայաստանին ուղղակիորեն վերաբերող 88-93-րդ հոդվածների շրջանակներում, ինչը բնական պետք է համարել, քանզի դրանցով վերականգնվում էր հայ ժողովրդի իրավունքն իր հայրենիքի` Արեւմտյան Հայաստանի մի մասի նկատմամբ:

Պայմանագրի 88-րդ հոդվածով Թուրքիան Հայաստանը ճանաչում էր որպես ազատ եւ անկախ պետություն, ինչպես դա արդեն արել էին դաշնակից պետությունները: Հոդվածի վերջին ձեւակերպմամբ փաստորեն արձանագրվում էր, որ պատերազմում պարտված թուրքական պետությունից բացի, Հայաստանի անկախ պետականությունն արդեն իսկ ճանաչված է Սեւրի պայմանագիրը ստորագրող հաղթանակած տասներկու պետությունների կողմից:

89-րդ հոդվածով Թուրքիան եւ Հայաստանը, ինչպես եւ մյուս Բարձր պայմանավորվող կողմերը, համաձայնվում էին ԱՄՆ-ին թողնել Էրզրումի, Տրապիզոնի, Վանի եւ Բիթլիսի նահանգներում Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ սահմանը որոշելու հարցը եւ ընդունել նրա կայացրած որոշումը, ինչպես նաեւ այն բոլոր պայմանները, որոնք նա կարող է սահմանել ինչպես Հայաստանին դեպի ծով ելք ապահովելու, այնպես էլ հիշյալ սահմանագծին հարող թուրքական բոլոր տարածքների ապառազմականացման վերաբերյալ: Հատկանշական է, որ Հայաստանի դեպի Սեւ ծով ելք ապահովելուց բացի, տվյալ հոդվածով նախատեսվում էր նաեւ Հայաստանին փոխանցվելիք Արեւմտյան Հայաստանի տարածքներին հարող թուրքական իշխանության տակ մնացած տարածքների ապառազմականացումը: Պայմանագրի տեքստում տվյալ դրույթի ներառումը առավել քան կարեւոր էր, քանի որ Թուրքիայում քեմալական շարժման ակտիվացումն ուղղակի սպառնալիք էր հայկական պետության գոյության համար:

Պայմանագրի 90-րդ հոդվածի երկրորդ պարբերությամբ սահմանվում էր, որ Թուրքիայի ֆինանսական պարտավորությունների չափին եւ դրանց բնույթին վերաբերող պայմանագրի այն դրույթները, որոնք կիրառվելու են Թուրքիայից անջատվող տարածքների հանդեպ, կգործադրվեն նաեւ Հայաստանին փոխանցվող տարածքների նկատմամբ` վկայակոչելով պայմանագրի VIII մասի (Ֆինանսական դրույթներ) 241-244-րդ հոդվածները: Արեւմտյան Հայաստանի Էրզրումի, Վանի եւ Բիթլիսի նահանգների եւ Տրապիզոնի նահանգի 1/3-ի փոխանցումը Հայաստանի Հանրապետությանն արդեն իսկ վճռված հարց համարելով, պայմանագիրը ստորագրող հաղթանակած պետությունները այդ տարածքների մասով Օսմանյան կայսրության նախկին պարտավորությունների կատարումը, ինչպես նաեւ իրավունքների հետ կապված հարցերը փոխանցում էին Հայաստանի Հանրապետությանը:

Փաստաթղթի 93-րդ հոդվածով էլ Հայաստանը պարտավորվում էր պաշտպանել հիմնական ազգաբնակչությունից ռասայի, լեզվի եւ կրոնի առումով տարբերվող բնակիչների շահերը, ինչը նախատեսվում էր ամրագրել նաեւ Հայաստանի եւ գլխավոր տերությունների միջեւ կնքվելիք պայմանագրերում: Այս հոդվածով Հայաստանի վրա պարտավորություն էր դրվում առաջին հերթին պաշտպանել Էրզրումի, Վանի, Բիթլիսի նահանգների եւ Տրապիզոնի նահանգի` իրեն միացվելիք տարածքներում բնակվող մահմեդական բնակչության` թուրքերի, քրդերի, ինչպես նաեւ թուրքական իշխանությունների կողմից Բալկաններից ու Հյուսիսային Կովկասից այդ տարածքներում վերաբնակեցված մուսուլման ժողովուրդների անվտանգությունը: Քաջատեղյակ լինելով, որ պատերազմի տարիներին այդ տարածքներում բնակվող մահմեդականներն ակտիվ մասնակցություն են ունեցել հայերի զանգվածային բնաջնջման գործում, դաշնակից տերությունները սույն հոդվածով Հայաստանի իշխանությունների վրա պարտավորություն էին դնում` կանխել եւ բացառել նրանց նկատմամբ վերապրողների եւ զոհերի ժառանգների կողմից վրեժխնդրության հնարավոր դրսեւորումները:

Պայմանագրի 92-րդ հոդվածի համաձայն, Ադրբեջանի եւ Վրաստանի հետ Հայաստանի սահմանների հարցը պետք է որոշվեր շահագրգիռ պետությունների ընդհանուր համաձայնությամբ, իսկ եթե նրանց չհաջողվեր համաձայնության գալ, ապա դա պետք է որոշեին գլխավոր դաշնակից տերությունները, որոնք պետք է հոգ տանեին այդ երկրների միջեւ սահմանազատումը տեղում գծանշելու մասին: Հաշվի առնելով, որ Ադրբեջանն հավակնություններ ուներ Արցախի, Զանգեզուրի եւ Նախիջեւանի հանդեպ, որոնք որակվում էին որպես վիճելի տարածքներ, իսկ Վրաստանը` Լոռիի նկատմամբ, որը «չեզոք գոտու» կարգավիճակ էր ստացել, ապա ակնհայտ է, որ շահագրգիռ կողմերին սահմանային հարցերում չէր հաջողվելու համաձայնության գալ եւ այդ հարցը նույնպես թողնվելու էր գլխավոր դաշնակից տերությունների որոշմանը:

**-Դաշնագրում էլի կա՞ն հոդվածներ, որոնք վերաբերում են Հայաստանի Հանրապետությանը:**

- Անշուշտ: Հայաստանի Հանրապետությանը դեպի Սեւ ծով ելք ապահովելու դրույթն ավելի էր հստակեցվում 352-րդ հոդվածով, որով նրան Տրապիզոնի նավահանգստի վրայով Սեւ ծով ազատ մուտք ունենալու իրավունք էր տրվում: Ավելին, Ազգերի լիգայի որոշմամբ Տրապիզոնի նավահանգստում Հայաստանին առհավետ վարձակալության էր հանձնվելու մի տեղամաս, որի շահագործման պայմանները, ներառյալ վարձավճարի չափը, որոշվելու էր Հայաստանի, Թուրքիայի մեկական անդամներից եւ Ազգերի լիգայի կողմից նշանակված ներկայացուցչից բաղկացած խառը հանձնաժողովի կողմից: Բացի այդ, 351-րդ հոդվածով Վրաստանի, Ադրբեջանի եւ Պարսկաստանի հետ մեկտեղ Հայաստանին դեպի Սեւ ծով ազատ մուտքի իրավունք էր տրվում նաեւ Բաթումի նավահանգստից: Այսինքն` Հայաստանը Տրապիզոնի եւ Բաթումի երկու նավահանգիստներով ելք էր ստանում դեպի Սեւ ծով, իսկ պայմանագրի 349-րդ հոդվածով այդ նավահանգիստներից ազատ տարանցիկության իրավունք էր տրվում դեպի Էգեյան եւ Միջերկրական ծովեր: Ակնհայտ է, որ սեւծովյան երկու նավահանգիստներից օգտվելու եւ Միջերկրական ծով ազատ դուրս գալու իրավունքը լուրջ հնարավորություններ կստեղծեին Հայաստանի սոցիալ-տնտեսական ծանր դրությունը մեղմելու համար:

Օսմանյան կայսրության ոչ թուրք բնակչության եւ առաջին հերթին հայերի իրավունքների պաշտպանության տեսակետից կարեւորություն են ներկայացնում նաեւ Սեւրի պայմանագրի 125 եւ 142-րդ հոդվածները:

Պայմանագրի 125-րդ հոդվածով կայսրությունից անջատված տարածքներում հաստատված ոչ թուրք բնակչությանը պայմանագրին ուժի մեջ մտնելու պահից մեկ տարվա ընթացքում ազատ իրավունք էր տրվում իր ազգային պատկանելությանը համապատասխան պետության քաղաքացիություն ընդունել: Այս հոդվածով փաստորեն հաստատվում էր ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնից ակնկալվող իրավարար վճռով Օսմանյան կայսրությունից անջատվելիք Արեւմտյան Հայաստանի Էրզրումի, Վանի եւ Բիթլիսի նահանգներում դեռեւս ողջ մնացած, ինչպես նաեւ կայսրությունից անջատված արաբական երկրներում ապաստանած նախկին օսմանահպատակ հայերի` Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը ընդունելու իրավունքը:

Պայմանագրի 142-րդ հոդվածով 1914 թ. նոյեմբերի 1-ից, այսինքն` Օսմանյան կայսրության Առաջին աշխարհամարտի մեջ մտնելու պահից, այդ երկրում հաստատված վարչակարգը ահաբեկչական էր որակվում: Երիտթուրքերի վարչակարգին տրված այս քաղաքական գնահատականից ելնելով, նույն հոդվածում նշվում էր, որ հիշյալ ամսաթվից հետո կայսրությունում քրիստոնյաների դավանափոխությունները եղել են բռնության հետեւանք, ուստի դրանից առաջ քրիստոնյա եղածներին իրավունք է տրվում ազատ վերադառնալու իրենց կրոնին: Այս կետով փաստորեն արձանագրվում էր պատերազմի ընթացքում թուրքական իշխանությունների կողմից կայսրության ոչ մահմեդական բնակչությանը, այդ թվում` հայերին, ոչ միայն ցեղասպանության ենթարկելու, այլեւ բռնի իսլամացնելու քաղաքականությունը` ընդգծելով բռնի իսլամացված հայերի, հույների եւ ասորիների իրենց հավատքին ազատ վերադառնալու իրավունքը:

Նույն հոդվածով դատապարտվում են պատերազմի ժամանակ կայսրության բնակչության նկատմամբ գործադրած վայրագությունները եւ օսմանյան կառավարության վրա պարտավորություն է դրվում որոնել եւ ազատ արձակել 1914 թ. նոյեմբերի 1-ից հետո անհետացած, առեւանգված, ներկալված եւ ազատազրկված ամեն ռասայի եւ կրոնի անձանց: Ակնհայտ է, որ այս դեպքում նույնպես խոսքը թուրքական իշխանությունների կողմից զանգվածային բնաջնջման եւ բռնագաղթի ենթարկված կայսրության ոչ մահմեդական, ոչ թուրք բնակչության եւ առաջին հերթին հայերի մասին է: Ինչպես հայտնի է, ցեղասպանության ընթացքում առեւանգվել էին տասնյակ հազարավոր հայ աղջիկներ ու կանայք, որոնք հարճի կարգավիճակում պահվում եւ սեռական բռնությունների էին ենթարկվում ինչպես մահմեդականների տներում, այնպես էլ հարեմներում: Բացի այդ, տասնյակ հազարավոր որբացած հայ մանուկներ պահվում էին թուրքական պետական որբանոցներում եւ դաստիարակվում էին որպես թուրք, իսկ նրանց մի մասն էլ ստրուկի կարգավիճակում պահվում եւ շահագործվում էր թուրքական կամ քրդական ընտանիքներում: Սեւրի պայմանագրի 142-րդ հոդվածի տվյալ դրույթով փաստորեն հնարավորություն էր ընձեռվում իրենց կամքին հակառակ գերեվարված հայ կանանց, աղջիկներին ու որբերին փրկել անխուսափելի ուծացումից եւ ազատ արձակել:

⇨11

# Բայրամովն ուզում է բանակցություններ սկսել զրոյից՝ չհրաժարվելով Մինսկի խմբից

Փաստորեն միեւնույն օրը տեղի ունեցան Ադրբեջանի նոր արտգործնախարար **Ջեյհուն Բայրամովի** մոսկովյան այցելությունը եւ Ռուսաստանի արտգործնախարար **Սերգեյ Շոյգուի** այցը Բաքու: Շոյգուի այցը համընկավ այն պահի հետ, երբ ավելի վաղ թուրք-ադրբեջանական ռազմափորձի վերջին փուլին ներկա գտնվելու համար այստեղ էր ժամանել Թուրքիայի ամբողջ բարձրագույն զինվորական հրամանատարությունը, իսկ նախագահ **Իլհամ Ալիեւը** հայտարարել էր, որ Թուրքիան Ադրբեջանի առաջին ռազմավարական գործընկերն է դառնում սպառազինությունների գնման եւ ռազմարդյունաբերական համալիրի հետ համագործակցության առումով:

Այս կապակցությամբ որոշ փորձագետներ ենթադրում են, որ վերջերս տեղի ունեցած հայ-ադրբեջանական սահմանային բախումներից հետո Ալիեւը ազդանշաններ է ուղարկում Մոսկվային, որ կարող է դիմել նրա հետ ռազմատեխնիկական համագործակցության կրճատմանը, եթե Մոսկվան չփոխի իր վերաբերմունքը ԼՂ հակամարտության կարգավորման նկատմամբ: Նման համատեքստում Շոյգուի այցը Բաքու ստանում էր բազմանշանակալիություն հատկապես ռազմական ոլորտում երկկողմ համագործակցության տեսակետից: Հիշեցնենք, որ վերջին տասնամյակների ընթացքում Ադրբեջանը ձեռք է բերել հինգ միլիարդ դոլարի ռուսական սպառազինություն եւ ռազմական տեխնիկա: Այնպես որ, կորցնելու բան կա:



Նման գաղափարախոսության կողմնակիցները պնդում են, որ ՀԱՊԿ անդամ Հայաստանին եւ ոչ անդամ Ադրբեջանին զենքի մատակարարումները թույլ են տալիս պահպանել ուժերի հավասարակշռությունը՝ կողմերից որեւէ մեկին չտալով խոշորամասշտաբ ռազմական գործողությունների դիմելու հնարավորություն: Փաստարկն այնքան էլ հիմնավոր չէ, բայց դեռեւս գործում է: Այսպիսով մենք հանգում ենք երկու այցելությունները միավորող խնդրին՝ ԼՂ հակամարտությանը, որը ժամանակի ընթացքում կարող է որոշել ռուս-ադրբեջանական հարաբերությունների ամբողջ բնույթը: Քանզի Ադրբեջանի նոր արտգործնախարար Բայրամովի Մոսկվա կատարած առաջին այցելությունն առանձնահատուկ էր ինչպես հայ-ադրբեջանական հակամարտության վերջին դրամատիկ իրադարձությունների, այնպես էլ բուն Ադրբեջանում տեղի ունեցած դեպքերի կապակցությամբ: Երկրի նոր արտգործնախարարը շեշտը դնում էր իրադրության սրացման վրա, ինչը պարզ դարձավ իր ռուս պաշտոնակցի հետ կազմակերպված մամլո ասուլիսում:

Երբ Ռուսաստանի արտգործնախարար **Սերգեյ Լավրովը** սկսեց խոսել այն մասին, որ «գոյություն ունեն մի ամբողջ շարք փաստաթղթեր Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների եւ արտգործնախարարների ստորագրություններով՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Ռուսաստանի, Ֆրանսիայի եւ ԱՄՆ-ի մասնակցությամբ», որ «այդ փաստաթղթերում, թեկուզ ընդհանուր գծերով, բայց ամրագրված է կարգավորման նկատմամբ համալիր մոտեցում, որը մեզ պետք է հասցնի խնդիրների վերջնական լուծմանը, եւ ցավալի էր կորցնել ղարաբաղյան կարգավորման ընթացքում մշակված այդ հիմքը», հասկանալի էր, որ Բայրամովը հակված է ամեն ինչ սկսել զրոյից՝ պաշտոնապես չհրաժարվելով ԵԱՀԿ Մինսկի խմբի ծառայություններից:

Ի դեպ, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Ռուսաստանը, Ֆրանսիան եւ ԱՄՆ-ը ծրագրում են հակամարտության տարածաշրջան այցելել եկող ամիս: Սակայն ռուս փորձագետ **Ստանիսլավ Տարասովի** կարծիքով, նախընտրելի կլիներ, որ նրանք կազմակերպեին Բայրամովի հանդիպումն ու բանակցությունները Ֆրանսիայի արտգործնախարարի եւ ԱՄՆ պետքարտուղարի հետ, թե չէ Ռուսաստանը, ընդհանուր դիրք բռնելով ԵԱՀԿ Մինսկի խմբի մյուս նախագահների հետ, անդադար հայտնվում է առաջնագծում:

Բացի դրանից, Ադրբեջանը որեւէ նոր բան չի առաջարկում: Նրա ջանքերը կապվում են ԵԱՀԿ Մինսկի խմբի որեւէ անդամի գործողությունների հետ, բայց նման ցանկություններ ունեցողներ չկան, բացի Մոսկվայից, որը նույնպես չունի ԼՂ հակամարտությանը վերաբերող նոր առաջարկություններ: Դատելով ըստ ամենայնի, Բաքուն ներկայումս պատրաստ չէ Երեւանի հետ բանակցությունների եւ հնարավոր է ակտիվ ջանքեր գործադրի արտատարածաշրջանային մանեւրների համար: Բայց դրա համար եւս, ինչպես ասում է Լավրովը, անհրաժեշտ է նորմալացնել իրավիճակը, այդ թվում դադարեցնել ամեն տեսակ միջադեպերը ոչ միայն Արցախին սահմանակից գոտիներում, այլեւ անմիջականորեն հայ-ադրբեջանական սահմանում: Իսկ ինչպե՞ս դրան հասնել առանց հակամարտող կողմերի շփումների, եւ ո՞վ է պատրաստ կազմակերպել դրանք:

# Սեւրի պայմանագիրը որպես պահանջատիրության իրավաքաղաքական հիմքերից մեկը

⇨10

Ցեղասպանության հետեւանքով հայ ժողովրդին հասցված հսկայական ժողովրդագրական կորուստները ինչ-որ չափով մեղմելու տեսակետից պատերազմում պարտված հանցավոր թուրքական պետության հետ խաղաղության պայմանագրում այս դրույթի ամրագրումը առավել քան կարեւոր էր:

**-Իսկ այդ կարեւոր գործը կարելի՞ էր վստահել թուրքական իշխանություններին:**

-Միանգամայն բնական է, որ նման կարեւոր եւ պատասխանատու գործը չէր կարող վստահվել այդ ամենի համար պատասխանատու թուրքական իշխանություններին, ուստի նախատեսվում էր Ազգերի Լիգայի Խորհրդի կողմից ստեղծել խառը հանձնաժողով, որը տուժածների, նրանց ընտանիքի անդամների եւ մերձավորների բողոքների հիման վրա հետաքննություններ էր իրականացնելու՝ նշված խմբերի անձանց հայտնաբերելու եւ ազատ արձակելու նպատակով: Իր հերթին՝ օսմանյան կառավարությունը պարտավորվում էր ամեն կերպ աջակցել այդ հանձնաժողովի գործունեությանը, ապահովել նրա որոշումների կատարումը, երաշխավորել տուժածների իրավունքների վերականգնումը եւ նրանց անվտանգությունը: Պայմանագրի 142-րդ հոդվածում այս դրույթի ներառումը վկայում է այն մասին, որ հաղթանակած տերությունները հիմնավոր կասկածներ ունեին առ այն, որ թուրքական իշխանությունները կարող էին փորձել արհեստական խոչընդոտներ ստեղծել տվյալ գործընթացի համար, այդ պատճառով էլ թուրքական կողմի վրա նման պարտավորություններ էին դրվում:

**-Դաշնագրում կայի՞ն հոդվածներ, որոնք վերաբերում էին հայերից բռնագրավված հսկայական չափերի ունեցվածքին եւ այլ արժեքներին:**

- Զանգվածային բնաջնջման ու բռնագաղթի ենթարկված օսմանահպատակ ոչ թուրք բնակչության եւ առաջին հերթին հայերի խախտված իրավունքների վերականգնման վերաբերյալ հոդվածներից բացի, Սեւրի պայմանագրում տեղ են գտել նաեւ վերջիններիս ունեցվածքի բռնագրավումը դատապարտող եւ նրանց հասցված նյութական վնասների դիմաց հատուցում նախատեսող հոդվածներ:

Սեւրի պայմանագրի 144-րդ հոդվածը օսմանյան կառավարությանը պարտավորեցնում էր ոչ միայն ուժը կորցրած ճանաչել իր կողմից ընդունված «Լքյալ գույքի մասին» 1915 թ. ժամանակավոր օրենքն ու դրա լրացումները, որոնցով «օրինականացվել» էր ցեղասպանության ենթարկված արեւմտահայության զանգվածային ունեզրկման քաղաքականությունը, այլեւ արգելում էր նման օրենքների ընդունումն ապագայում:

Ոչ թուրք բնակչության եւ առաջին հերթին հայերի սեփականության իրավունքների վերականգնման դրույթներ սահմանելուց բացի, 144-րդ հոդվածով նախատեսվում էին նաեւ տվյալ գործընթացի վերահսկման մեխանիզմները: Օսմանյան կառավարությունը համաձայնվում էր, որ Ազգերի Լիգայի Խորհրդի կողմից ստեղծվեն միջնորդ հանձնաժողովներ՝ թուրքական կառավարության եւ տուժած համայնքի մեկական ներկայացուցիչների եւ Ազգերի Լիգայի Խորհրդի կողմից նշանակված նախագահի կազմով՝ սեփականության հետ կապված հարցերը եւ վեճերը քննելու եւ լուծելու համար: Այն դեպքերում, երբ հանձնաժողովը գույքի նկատմամբ չեղյալ կհամարեր նոր տերերի իրավունքները, վերջիններիս փոխհատուցում տրամադրելու պարտականությունը դրվում էր թուրքական կառավարության վրա, եւ դա առիթ չպետք է հանդիսանար այդ գույքի օրինական տերերի իրավունքների վերականգնումը ուշացնելու համար: Հայերի անշարժ եւ շարժական գույքին ցեղասպանության եւ զանգվածային ունեզրկման հետեւանքով ապօրինաբար տիրացած մահմեդականներին փոխհատուցելու պարտավորությունը թուրքական կառավարության վրա դնելու դրույթն առավել քան օրինաչափ էր, քանզի այդ բոլոր ապօրինությունների պատասխանատուն հենց թուրքական պետությունն էր՝ իր վարած հանցավոր քաղաքականությամբ:

Հայերի բռնագրավված գույքի վերադարձի գործընթացում թուրքական կողմի հնարավոր հակազդեցությունները կանխելու նպատակով նույն հոդվածում ամրագրված էր, որ օսմանյան կառավարությունը պարտավորվում է հնարավորության սահմաններում նպաստել հանձնաժողովի որոշումների կատարմանը, որոնք անբեկանելի են եւ դրանց չի կարող հակադրվել օսմանյան դատական կամ վարչական իշխանությունների կողմից ընդունված որեւէ որոշում:

Ցեղասպանության հետեւանքով հայերի կրած նյութական կորուստների վերականգնման եւ դրանց հետեւանքների հաղթահարման առումով Սեւրի պայմանագրի 144-րդ հոդվածում առաջ էին քաշվում բավականին իրատեսական միջոցներ եւ մեխանիզմներ, որոնք չեն կորցրել իրենց արդիականությունը եւ լիարժեք կերպով կարող են դրվել Հայոց ցեղասպանության նյութական հետեւանքների վերացման գործընթացի հիմքում:

**-Ինչպիսի՞ վերաբերմունք էր առկա դաշնագրում ցեղասպանների նկատմամբ:**

- Սեւրի պայմանագրի 230-րդ հոդվածի համաձայն, թուրքական կառավարությունը ճանաչում էր դաշնակից տերությունների իրավունքը քրեական պատասխանատվության կանչելու ոչ միայն այն անձանց, ովքեր մեղադրվում էին պատերազմի օրենքների եւ սովորույթների դեմ կատարված հանցագործությունների մեջ, այլեւ պարտավորվում էր նաեւ դաշնակից տերություններին հանձնել նրանց կողմից կոտորածների մեջ մեղադրվող անձանց, ովքեր պատերազմի ընթացքում հանցագործություններ էին կատարել այն տարածքներում, որոնք 1914 թ. օգոստոսի 1-ի դրությամբ հանդիսանում էին Օսմանյան կայսրության մասը: Այս հոդվածով փորձ էր կատարվում կյանքի կոչել 1915 թ. մայիսի 24-ի Անտանտի տերությունների համատեղ հայտարարությունը, քանզի դաշնակիցները դեռ այն ժամանակ խոստացել էին պատասխանատվության կանչել հայերի զանգվածային սպանությունների մեջ մեղադրվողներին: Այս դրույթը կարեւոր էր նաեւ այն իմաստով, որ թուրքական նոր իշխանությունները չէին կարող խուսափել Միջագետքի անապատներում հայերի զանգվածային կոտորածներում մեղադրվող անձանց արտահանձնելուց այն հիմնավորմամբ, թե հանցագործությունները կատարել են այն տարածքներում, որոնք այլեւս իրենց չեն պատկանում:

**-Եթե կարելի է, հնարավորինս կարճ ամփոփեք ասվածը:**

-Այսպիսով, Հայրենիքի մի մասին նկատմամբ տեղաբնիկ հայ ժողովրդի իրավունքը վերականգնող Հայաստանին անմիջականորեն վերաբերող հոդվածներից բացի, Սեւրի պայմանագրում տեղ են գտել ոչ պակաս կարեւոր հոդվածներ, որոնցով կարգավորվում էին օսմանահպատակ ոչ թուրք ժողովուրդների, այդ թվում հայերի խախտված իրավունքների վերականգնման ու հասցված նյութական վնասների հատուցման հարցերը, ինչպես նաեւ քրեական պատասխանատվություն էր նախատեսվում թուրք բարձրաստիճան ու տեղական պաշտոնյաների նկատմամբ ոչ միայն պատերազմական հանցագործություններ կատարելու, այլեւ մարդկության դեմ կատարած հանցագործությունների, առաջին հերթին՝ հայերի զանգվածային բնաջնջումը ծրագրելու եւ իրագործելու համար: Նշված հոդվածների պատշաճ վերլուծությունը հնարավորություն կտա հստակեցնել հանցավոր թուրքական պետության կողմից Սեւրի պայմանագրով ստանձնած միջազգային պարտավորությունները, ինչպես նաեւ քննարկել տվյալ փաստաթղթում առաջարկվող ցեղասպանության հանցագործության զոհ դարձած տեղաբնիկ ժողովուրդների եւ առաջին հերթին հայերի խախտված իրավունքներն ու նյութական վնասները վերականգնելու մեխանիզմների իրագործման հնարավորություններն ու հեռանկարները:

*Հարցազրույցը վարեց*
**ՍՈՒՐԵՆ Թ. ՍԱՐԳՍՅԱՆԸ**
*պգդ, պրոֆեսոր*

# Հեղափոխությունը դպրոցին հակացուցված է, ազգայինից նահանջը` հանցանք

**ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ**

*Գյումրի*




Եթե ԽՍՀՄ-ի երկաթե վարագույրը մեզ գոնե պաշտպանում էր դրսի աշխարհի տարբեր քայքայիչ ազդեցություններից ու պարտադրանքներից, ապա դրա վերացումից հետո մենք հայտնվեցինք այդ ամենի դեմ որպես տարբեր եղանակներով ներթափանցման «բաց» դաշտ: Իսկ որպես առանձին պետություն առաջ եկավ նաեւ աշխարհի գործընթացներին համաքայլվելու երեւի բնական օրակարգը: Այսպես տարբեր միջազգային կառույցների անդամակցելուց բխող պարտադրանքով մենք ամեն անգամ մեր Սահմանադրության մեջ փոփոխություններ ենք մտցնում ու ավելացնում, կոնվենցիաներ ենք ընդունում ու այդ ամենի հիման վրա` օրենքներ, եւ հետո մեր հանրային կյանքը բնականաբար պետք է համարեցվի դրանց: Իսկ այդ կյանքը սկսվում է գաղափարական-բարոյական վերնաշենքից, դրսից թելադրվածի պարագայում` եղածի հաճախ խարխլումից ու խեղումից... Իսկ դա, անշուշտ, ցավոտ է լինում ու այս ամենին շարունակաբար այսպես անզգույշ-անվերապահ տրվելու դեպքում կարող է նաեւ ճակատագրական լինել:

Նման հարցերում քիչ դեր չունի նաեւ դրամի, դրսի փողի՛ հզոր գործոնը, որը հատկապես տնտեսական դժվարություններ ունեցող մեր երկրում այսքան տարի ինչ ասես որ չի արել, թելադրել ինչպես պետական-կառավարական, այնպես էլ, գուցե ավելի շատ, անհատական ու խմբային մակարդակներում: Երբեմն հասնելով անգամ տխուր զավեշտի, երբ, օրինակ, գլխավոր հովանավորչարարներին միջազգային կամ նման կառույցներից ֆինանսներ էին տրամադրում նույն այդ հովանավորչության դեմ պայքարելու համար:

Այդ դրսի փողերը, մերի համեմատ լավ վարձատրությունը մեր անկախության առաջին ամենադժվար տարիներից սկսած (երբ հայաստանցին օրվա անգամ ցամաք հացի սուր խնդիրն ուներ) ձեւավորեցին այսօր մեր կյանքում ու ենթադրաբար արդեն նաեւ պետական կյանքում ոչ աննկատ դերակատարում ունեցող, քաղաքացիական հասարակություն կոչվող հկ-ական խավն ու հկ-ական մտածողությունը... Ներառյալ նաեւ այսպես կոչված գրանտակերականը: Այս բավական տարածում գտած մտածողությունը կրողների մի մասը այսօր կարող է լինել համարյա ամեն թելադրանքի հլու կատարող կամ արդեն առանց թելադրանքի էլ «հարմար» ուղղությամբ գործընթացի մաս կազմել:

Սրան ավելացնենք նաեւ տարբեր նման շրջանակներում արմատացած ազգային անլիարժեքության հիվանդագին ու վտանգավոր բարդույթը: Մեր ունեցածի արժեքն ու կարեւորությունը ավելի ու ավելի հաճախ չի գիտակցվում, գնահատվում, եւ խնդիրներ լուծող շատերի մեջ էլ ձեւավորվել է տգիտությունից ծնված մի մտայնություն, թե այն ամենը ինչը մերն է` լավը չէ, հին է, իսկ այ, ինչը դրսից է` դա է լավն ու առաջադիմականը: Եվ ավերումնքը պատրաստ է...

Թվում է, ավել կամ պակաս չափով հիմնականում այս գործոնների ծնունդ են նաեւ կրթական ոլորտում ԿԳՄՍ նախարարության ապարեզ նետած հեղափոխական փոփոխությունների նախագծերը, որոնք հատկապես սպառնում են հայագիտական առարկաներին ու միանգամայն պատճառաբանված մեծ հուզում են առաջացրել: Այդ փաստաթղթերի բովանդակությունն արդեն բավական մանրամասն քննադատվել ու վերլուծվել է, այժմ փորձագիտական խմբերը դրանց հետագա վերամշակման ժամանակ ունեն: Բայց խնդիրը, կարծում ենք, բխում է նաեւ այդ չափորոշիչների, ծրագրերի մշակման եւ նախագծերի քննարկման բուն գործընթացից: Նրանից, թե նախարարությունն այդ ամենը ինչպես է կազմակերտել եւ դրանց ինչպես է վերաբերվում:

Արտաքուստ կարծես թե արվել է նման գործընթացների համար անհրաժեշտը: Փաստաթղթերը մշակող փորձագետներն ընտրվել են բաց մրցույթով, ապահովվել է նաեւ շարադրված նոր նախագծերի իրենց ասելով ծավալուն քննարկում ուսուցիչների հետ: Բայց որքան հասցրել ենք հասկանալ, ազգային եւ մասնագիտական առումով ամենապատասխանատու այս գործընթացում հենց սկզբից նախ տարօրինակ կերպով անտեսվել, արհամարհվել է հանրապետության համապատասխան ոլորտի առաջատար ակադեմիական (սա էլ իր վտանգավոր հեռահար ուղերձն ունի...) եւ բուհական հաստատությունների, օղակների, դրանց հեղինակավոր մասնագետների դերը: Եթե նախկինում խնդիր է եղել գործող ուսուցիչների գուցե քիչ ընդգրկվածությունը, ապա այստեղ ընդհակառակը, ամեն ինչ կարծես թե թողնվել է միայն ուսուցիչների ու որոշ փորձագետների ուսերին: Որոնց էլ իրենք ընտրել են` ելնելով իրենց տված առաջադրանքի բնույթից: Իսկ եթե ճիշտ է, որ առարկայական խմբերից մեկի նույնիսկ ոչ թե անդամ, այլ ղեկավար է կարգվել նախկինում Հայոց պատմության դասավանդման եղանակը թուրքերի հետ քննարկած ու գիրք գրած մեկը, սա արդեն ավելի քան շատ բան է ասում այդ առաջադրանքի բնույթի եւ «ուժեղ Հայաստանի ռազմավարության» պատկերացման մասին:

Հանրակրթության պետական չափորոշչի եւ առարկայական չափորոշիչների ու ծրագրերի կարծես թե ուրիշներից թարգմանված նախագծերը նախարարությունն ըստ ամենայնի նույնիսկ կարծիքի ու քննարկման չի ուղարկել նշված մասնագիտական հաստատություններին ու օղակներին, իսկ նրանց եւ տարբեր հայտնի մասնագետների հրապարակային կամ պաշտոնական քննադատությունները ու կարծիքները շարունակում է որակել ընդամենը որպես... աղմուկ: Սա ի՞նչ անընդունելի գործելաոճ է:

Այս վերջին հարցում առաջատարն, իհարկե, նախարարն է: Հանրային հեռուստատեսությամբ իր հարցազրույցներում նա կամ իր ընտրած աշխատողներից մեկը գոնե մի անգամ չասացին, թե այ, այս մի քննադատությունն ընդունում ենք եւ հետագա վերամշակման ժամանակ կքննարկենք: Փոխարենը, ըստ իրենց, քննադատողներից մեկը, մյուսը այսինչ կուսակցությունից են, այս հեղինակավոր մասնագետը ստախոս է կամ դասագրքերի հեղինակ ու պարզապես շահագրգռված անձ է, մեկ ուրիշը «մանիպուլյացիա» է անում, այն մյուսներն էլ ընդամենը պատմության կեղծարարներ են... Հարցազրուցավարի այն «անմեղ» հարցին թե` ձեզ մեղադրում են, որ ծրագրից հանում եք մեր Մաշտոցին, Նարեկացուն, Սայաթ-Նովային, Արայիկ Հարությունյանը պատասխանում է. «Մեզ ավելի մեծ մեղք են վերագրում, ասում են` հայ գրականություն անվանումից հանում եք հայ-ը» (իբր չեն հանում): Եվ որպես իր իսկ բնորոշմամբ այդ կարեւոր հետազոտական եւ բուհական կենտրոններից հնչող «ստի ու կեղծիքի» արտահայտություն, ցույց է տալիս 7-9-րդ դասարանների գրականության դասագրքերի կազմերի լուսանկարները, թե տեսեք, մենք չենք հայ բառը հանողը, դրանք հենց «Գրականություն» են կոչվում, հեղինակն էլ (նայում-կարդում է, իբր անծանոթ մեկն է)` Դավիթ Գասպարյան: Նախարարին ցույց տվեք 10-12-րդ դասարանների «Հայ գրականություն» գործող դասագրքերը, կողքը դրեք իրենց իսկ` նախարարության կայքում օգոստոսի 14-ին հրապարակված իրազեկմամբ նախատեսվողը` «Գրականություն» (7-12-րդ դասարաններ) եւ հարցրեք` ո՞վ է տվյալ դեպքում «մանիպուլյացիա» անում ու մեղադրելով ուրիշին` այստեղ ո՞ւմ է ինքն ուզում մոլորության մեջ գցել... Հընթացս նաեւ ստվերել այդ կարեւոր հետազոտական ու բուհական կենտրոնների, նրանց հավաքական կարծիքի իրական (եւ ըստ ամենայնի ոմանց համար անհասանելի) արժեքը:

Դասագրքի անվանումը հեղինակը չի որոշում, իսկ այս պահին ձեռքիս եղած 9-րդ դասարանի դասագիրքն իր բովանդակությամբ գեղեցիկ ու համակող հայ գրականություն է, հեղինակն այդ է գրել, ու միայն մեր «Սասնա ծռերից» հետո տրված է համառոտ պատկերացում եւ փոքրիկ հատված հոմերոսյան «Ոդիսական» հունական դյուցազներգությունից եւ գրքի վերջում` Շեքսպիրին ու նրա «Համլետ» ողբերգությունը ներկայացնող մի բաժին: Եվ եթե հենց Դավիթ Գասպարյանի նման գրականագետ հեղինակի գիտելիքն ու կարծիքն Արայիկ Հարությունյանին պետք չեն, ապա մեզ, մեր դպրոցին, կարծում ենք, դեռ շատ են պետք: Որովհետեւ նման մասնագետը, նաեւ, երբեք դպրոցի դասագիրք չի մտցնի նոր ասպարեզ եկած ու դեռ ժամանակի քննությունը չբռնած որեւէ գրողի, էլ չենք ասում` ինչ-որ անընդունելի թեմաներ, չնայած նախարարի դատողությանը, թե «ժամանակը պետք է ցույց տա` արդյո՞ք արժեքավոր են էդ նյութերը եւ էդ ստեղծագործությունները եւ արդյո՞ք էդ հեղինակները արժանի են հետագայում էլ դասագրքերում տեղ ունենալու»: Եղա՞վ...

Բայց իրենք, հասկանու՞մ եք, «պրոյեկտային» ու «ինտեգրված» ուսուցում են անում, վերապատրաստման «մոդուլներ» են մշակում, իրենք կարծել էին, որ Հայոց եկեղեցու պատմության հետ կապված «կոնցեպտը» հասցրել են որոշ շրջանակների: Ու հիմա ապագայի համար «պռոյեկտում են» ու ցույց են տալու, թե որ «որակներն» (փոխանակ` հատկանիշները) են մեզ անհրաժեշտ ապագայում` «համակեցության կանոններով ապրող հասարակություն (...)» ունենալու համար: Ու իրենք պարբերաբար առցանց հանդիպումներ են անցկացրել «թիրախ» խմբերի հետ: Իրոք որ թիրախ...

Ու մեկ էլ` թեկուզ որոշակի քաղաքական ուժի հասցեին ասված, բայց ընդհանուր մարտահրավերի պես հնչող համառ մի պնդում. «Կրթության ռեֆորմը տեղի է ունենալու` անկախ ձեր աղմուկից»: Ուրեմն ինչո՞ւ եք ձեւական քննարկում անում կամ ընդհանրապես անունը դնում քննարկում:

Անշուշտ, այս ընթացքում եղան նաեւ որոշ ուժերի կողմից շահարկումներ, եւ այս իմաստով կարելի է նախարարին էլ հասկանալ: Բայց ընդհանուր առմամբ նույնիսկ նախարարության կամքից անկախ բավական բովանդակալից ընդհանուր շահագրգիռ քննարկում ստացվեց դպրոցի հայագիտական առարկաների ուսուցման առանցքային խնդիրների վերաբերյալ: Կրթության լիազոր մարմինը գուցե չուզենա հաշվի նստել տարբեր հեղինակավոր մասնագետների գնահատականների ու կարծիքների հետ, ինչն ինքնին առնվազն լավ չէ: Սակայն քննարկվող խնդիրների վերաբերյալ իրենց պաշտոնական դիրքորոշումներն ու բավական մանրամասն, հիմնավոր վերլուծությունները, առաջարկություններն են ներկայացրել նաեւ այնպիսի հաստատություններ, օղակներ, ինչպես Գիտությունների ազգային ակադեմիայի պատմության, Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտները, Երեւանի պետական համալսարանի Հայոց պատմության ամբիոնը, հայ բանասիրության ֆակուլտետի գիտական խորհուրդը, Հայկական պետական մանկավարժական համալսարանի հայ հին եւ միջնադարյան գրականության ամբիոնը, Վանաձորի պետական համալսարանի հայոց լեզվի եւ հայ գրականության ամբիոնը, Համազգային հայ կրթական եւ մշակութային միության Բեյրութի կենտրոնական վարչությունը... Այ այս կարծիքներն ու առաջարկությունները չլսելու իրավունք նախարարությունը չունի:

Հասկանալի է, որ ժամանակն իր պահանջներն է առաջադրում: Բայց հեղափոխական ցնցումները դպրոցին հակացուցված են, համաշխարհայնացման ազգակործան հովերին անվերապահ տրվելը` հանցանք:

Դպրոցի իրական ռեֆո՞րմ եք ուզում. վերացրեք վերջին տարիների ձեւական ու կաղկող նեյնիմ-նեյնիմները: Անվերջանալի փորձարարություններից շնչասպառ հանրակրթությունը նորից դարձրեք տասնամյա, ուսուցչի դրույքաչափը` էլի 18 ժամ, արժանապատիվ վարձատրությամբ: Եվ կարողացեք դպրոցը դեռ հասցնել նախկին որակական մակարդակին (որ հիմք լինի), հետո առաջ գնացեք:

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԹ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԹԷՔԷՅԵԱՆ ՓԱԲԼԻՇԻՆԳ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
**e-mail:** azg@azg.am, azgdaily@gmail.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը` «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

“AZG” Weekly
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 0010

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ` 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող` «Թեքեյան Փաբլիշինգ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը` 286.110.1041780, տրուած` 25.10.2018 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 3.9.2020, գինը` 200 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում` Արշակունեաց 2: